

Խորհրդի 1994 թվականի հուլիսի 27-ի թիվ 2100/94 (ԵՀ) կանոնակարգ

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների մասին

Պաշտոնական տեղեկագիր L 227, 01.09.1994թ., էջ 0001 – 0030, ֆիննական հատուկ հրատարակություն. գլուխ 3, հատոր 60 , էջ 0196, շվեդական հատուկ հրատարակություն գլուխ 3, հատոր 60, էջ 0196

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 235-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

քանի որ առաջանում են բույսի սորտերին վերաբերող կոնկրետ հիմնախնդիրներ՝ արդյունաբերական սեփականության համակարգի առումով, ինչը կարող է լինել կիրառելի,

քանի որ բույսի սորտերին առնչվող արդյունաբերական սեփականության համակարգերը ներդաշնակեցված չեն Համայնքի մակարդակով եւ, հետեւաբար, շարունակում են կարգավորվել անդամ պետությունների օրենսդրություններով, որոնց բովանդակությունը միատեսակ չէ,

քանի որ նման հանգամանքներում նպատակահարմար է ստեղծել Համայնքի մի այնպիսի համակարգ, որը, չնայած ազգային համակարգերին զուգահեռ գոյություն ունենալուն, տալիս է արդյունաբերական սեփականության իրավունքներ շնորհելու հնարավորություն, որը վավեր է ամբողջ Համայնքի տարածքում,

¹ՊՏ թիվ C 244, 28. 09. 1990թ., էջ 1 եւ ՊՏ թիվ C 113, 23. 04. 1993թ., էջ 7:

²ՊՏ թիվ C 305, 23. 11. 1992թ., էջ 55 եւ ՊՏ թիվ C 67, 16. 03. 1992թ., էջ 148:

³ՊՏ թիվ C 60, 08. 03. 1991թ., էջ 45:

քանի որ նպատակահարմար է, որ Համայնքի այս համակարգի կիրարկումը եւ կիրառումը չիրականացվեն անդամ պետությունների իշխանությունների կողմից, այլ իրավասութեկտություն ունեցող Համայնքային գրասենյակի՝ «Բույսի սորտի հարցերով համայնքային գրասենյակի» կողմից,

քանի որ համակարգում պետք է նաեւ հաշվի առնվեն բուսաբուծությանն առնչվող տեխնոլոգիաների զարգացումները, այդ թվում՝ կենսատեխնոլոգիան. քանի որ նոր սորտերի վերարտադրությունն ու կատարելագործումը խթանելու նպատակով անհրաժեշտ է ապահովել ընթացիկ իրավիճակի համեմատությամբ բարելավված պաշտպանություն բոլոր բուսաբույծների համար, այնուհանդերձ, առանց անհիմն կերպով նվազեցնելու հասանելիությունը պաշտպանության գործընթացին ընդհանուր առմամբ կամ բուսաբուծության որոշակի տեխնոլոգիաների դեպքում,

քանի որ բուսաբանական բոլոր ցեղերի եւ տեսակների սորտերը պետք է լինեն պաշտպանվող,

քանի որ պաշտպանվող սորտերը պետք է համապատասխանեն միջազգայնորեն ճանաչված պահանջներին, այսինքն՝ դրանց տիպային առանձնահատկությանը, միատեսակությանը, կայունությանն ու նորությանը, ինչպես նաեւ սորտի համար նախատեսված անվանմամբ սահմանված լինեն:

քանի որ կարելու է բույսի սորտի սահմանումը տրամադրելը՝ համակարգի պատշաճ գործունեությունն ապահովելու նպատակով,

քանի որ այդ սահմանումը նպատակ չունի փոփոխելու այն սահմանումները, որոնք կարող են հաստատված լինել մտավոր սեփականության իրավունքների ոլորտում, հատկապես՝ արտոնագրերի ոլորտում, չխոչընդոտելու/չհակասելու կամ բացառելու արտադրանքի, այդ թվում՝ բույսերի եւ բուսանյութերի, պաշտպանվածությունը ղեկավարող օրենքների կիրառումը, կամ արդյունաբերական սեփականության նման այլ իրավունքների համաձայն տեղի ունեցող գործընթացները,

քանի որ, այնուհանդերձ, խիստ ցանկալի է ունենալ ընդհանուր սահմանում երկու ոլորտներում էլ. քանի որ միջազգային մակարդակով պետք է աջակցել համապատասխան ջանքերի գործադրման ընթացքին՝ նման ընդհանուր սահմանմանը հասնելու նպատակով,

քանի որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների շնորհման համար անհրաժեշտ է տվյալ սորտին առնչվող կարելու բնութագրերի գնահատումը. քանի որ, այնուամենայնիվ, անպայման չէ, որ այդ բնութագրերն առնչվեն իրենց տնտեսական կարելուությանը,

քանի որ համակարգը պետք է նաեւ հստակեցնի, թե ում է պատկանում բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը. քանի որ որոշ դեպքերում դա կպատկանի ընդհանուր առմամբ մի քանի անձանց, այլ ոչ թե միայն մեկին. քանի որ պետք է կանոնակարգվի հայտերը ներկայացնելու համար պաշտոնական իրավասությունը,

քանի որ համակարգը պետք է սահմանի նաեւ սույն Կանոնակարգում կիրառվող «իրավատեր» եզրաբառը. քանի որ այդ «իրավատեր» եզրաբառը, առանց հետագա մասնավորեցման, կիրառվում է սույն Կանոնակարգում, այդ թվում՝ դրա 29 (5) հոդվածում, նախատեսվում է, որ այն պետք է լինի դրա 13 (1) հոդվածի նշանակության շրջանակներում,

քանի որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի գործողության մեջ լինելը պետք է Համայնքի ամբողջ տարածքում միատեսակ լինի, իրավատիրոջ համաձայնությունն ստանալուն ենթակա առետրային գործարքները պետք է լինեն հստակ սահմանազատված. քանի որ պաշտպանության շրջանակը պետք է ընդլայնվի՝ ազգային շատ համակարգերի համեմատությամբ՝ մինչեւ տվյալ սորտին համապատասխան որոշակի սահմանը՝ հաշվի առնելով Համայնքից դուրս գտնվող երկրների միջոցով իրականացվող առետրային գործունեությունը՝ առանց պաշտպանության. քանի որ իրավունքների դադարեցման սկզբունքի ներդրմամբ պետք է երաշխավորվի, որ այդ պաշտպանությունը չափից շատ չէ,

քանի որ բուսաբուծությունը խթանելու նպատակով համակարգն, ըստ էության, հաստատում է պաշտպանվող սորտերին ազատ հասանելիություն ունենալու միջազգայնորեն ընդունված կանոնը՝ դրանց կատարելագործման եւ նոր սորտերի շահագործման նպատակներով,

քանի որ, որոշ դեպքերում, երբ նոր սորտը, չնայած հստակորեն տարբեր լինելուն, ըստ էության, ստացված է նախնական սորտից, ապա պետք է ստեղծվի վերջինիս իրավատիրոջից կախվածության որոշակի ձեւ,

քանի որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների կիրառումը պետք է ենթակա լինի հանրային շահերից բխող ընդունված դրույթներում շարադրված սահմանափակումներին,

քանի որ սա ներառում է գյուղատնտեսական արտադրանքի երաշխավորումը. քանի որ այդ նպատակով պահանջվում է թույլտվություն ֆերմերների համար՝ հավաքված արտադրանքը որոշակի պայմաններում բազմացնելու նպատակով կիրառելու համար,

քանի որ պետք է ապահովվի, որ պայմանները սահմանվեն Համայնքի մակարդակով,

քանի որ պետք է նաեւ ապահովվի պարտադիր լիցենզավորում որոշակի հանգամանքներում՝ ելնելով հանրային շահերից, ինչը կարող է ներառել որոշակի յուրահատկություններով օժտված ապրանքներ շուկային մատակարարելու անհրաժեշտությունը, կամ պահպանել կատարելագործված սորտերի շարունակական վերարտադրությունն ապահովելու խթանը,

քանի որ սորտի համար նախատեսված անվանումների կիրառումը պետք է դառնա պարտադիր,

քանի որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքն սկզբունքորեն պետք է ունենա առնվազն 25 տարվա գործողության ժամկետ, իսկ խաղողի եւ ծառատեսակների դեպքում՝ առնվազն 30 տարվա գործողության ժամկետ. եւ քանի որ իրավունքի դադարման այլ հիմքեր պետք է հստակեցվեն,

քանի որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքն իրավատիրոջ սեփականության օբյեկտ է, հետեւաբար, պետք է հստակեցվի դրա դերն անդամ պետությունների չներդաշնակեցված իրավական դրույթների առնչությամբ, մասնավորապես՝ քաղաքացիական իրավունքի մասով. եւ քանի որ սա վերաբերում է նաեւ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների առնչությամբ իրավասության կիրարկմանը եւ խախտումների կարգավորմանը,

քանի որ անհրաժեշտ է համոզվել, որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների համակարգի սկզբունքների ամբողջական կիրառումը չի խաթարվում այլ համակարգերի գործողության հետեւանքով. քանի որ այս նպատակով, անդամ պետությունների՝ գոյություն ունեցող միջազգային

պարտավորությունների համաձայն, պահանջվում են որոշակի կանոններ, որոնք վերաբերում են արդյունաբերական սեփականության այլ իրավունքների հետ փոխհարաբերակցությանը,

քանի որ պարտադիր է ուսումնասիրել՝ արդյոք պետք է համապատասխանեցվեն արդյունաբերական սեփականության այլ համակարգերում համաձայնեցված պաշտպանության համար սահմանված պայմանները, ինչպիսիք արտոնագրերն են, եւ ինչ չափով, կամ, հակառակ դեպքում, փոփոխվեն՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների համակարգի հետ համապատասխանեցնելու նպատակով. քանի որ դա, անհրաժեշտության դեպքում, պետք է սահմանվի համարժեք կանոնների միջոցով՝ Համայնքի լրացուցիչ օրենսդրությամբ,

քանի որ բույսի սորտի հարցերով Համայնքային գրասենյակի, այդ թվում՝ դրա Բողոքարկման խորհուրդների, պարտականություններն ու իրավասությունները՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների շնորհման, դադարման կամ ստուգման վերաբերյալ, ինչպես նաեւ՝ հրապարակումները, հնարավորինս պետք է ձեւավորվեն այլ համակարգերի համար մշակված կանոնների հիման վրա, ինչպես նաեւ՝ Գրասենյակի կառուցվածքը եւ Ընթացակարգի Կանոնները, համագործակցությունը Հանձնաժողովի եւ անդամ պետությունների հետ՝ մասնավորապես վարչական խորհրդի միջոցով, Փորձաքննությունների իրականացման գրասենյակների ընդգրկումը տեխնիկական փորձաքննություններում եւ նույնիսկ բյուջետային անհրաժեշտ միջոցառումներում,

քանի որ Գրասենյակը պետք է խորհրդատվություն ստանա եւ վերահսկողության ենթարկվի վերոհիշյալ Վարչական խորհրդի կողմից, որը բաղկացած է անդամ պետությունների եւ Հանձնաժողովի ներկայացուցիչներից,

քանի որ սույն Կանոնակարգի ընդունման համար Պայմանագրով չեն նախատեսվում այլ լիազորություններ՝ 253-րդ հոդվածում նշվածներից բացի,

քանի որ սույն Կանոնակարգում հաշվի են առնվում միջազգային գործող կոնվենցիաները, ինչպիսիք են՝ «Բույսի նոր սորտերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան» (UPOV կոնվենցիա), «Եվրոպական արտոնագրերի տրամադրման մասին կոնվենցիան» (Եվրոպական Արտոնագրային Կոնվենցիա) կամ մտավոր սեփականության իրավունքների առեւտրին, այդ թվում՝ կեղծված ապրանքների առեւտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը. քանի

որ այն համապատասխանաբար կիրարկում է բույսի սորտերն արտոնագրելու գործընթացի վրա դրված արգելքը միայն այնքանով, որքանով պահանջվում է Եվրոպական Արտոնագրային Կոնվենցիայով, այսինքն՝ բույսի նման սորտերի համար,

եւ քանի որ սույն Կանոնակարգը պետք է վերանայվի փոփոխման նպատակով, եթե դա համարվի անհրաժեշտ՝ հաշվի առնելով վերոհիշյալ կոնվենցիաներում հետագա բարեփոխումները,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ՄԱՍ ՄԵԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքներ

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների համակարգը սույնով սահմանվում է որպես բույսի սորտերի համար Համայնքի արդյունաբերական սեփականության իրավունքների միակ եւ բացառիկ ձեւ:

Հոդված 2

Համայնքային իրավունքների միատեսակ գործողություն բույսի սորտի նկատմամբ

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքներն ունենում են միատեսակ գործողություն Համայնքի ամբողջ տարածքում եւ չեն կարող շնորհվել, փոխանցվել կամ դադարեցվել վերոնշյալ տարածքում, եթե միայն դա չի իրականացվում միատեսակ հիմքով:

Հոդված 3

Ազգային սեփականության իրավունքներ՝ բույսի սորտերի համար

Սույն Կանոնակարգը չի հակասում 92 (1) հոդվածի դրույթներին ենթակա բույսի սորտերի համար ազգային սեփականության իրավունքներ շնորհելու անդամ պետությունների իրավունքին:

Հոդված 4

Համայնքային գրասենյակ

Սույն Կանոնակարգը կիրարկելու նպատակով սույնով ստեղծվում է բույսի սորտի հարցերով Համայնքային գրասենյակը, այսուհետ՝ «Գրասենյակ»:

ՄԱՍ ԵՐԿՈՒ. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԳԼՈՒԽ Ի. ԲՈՒՅՍԻ ՍՈՐՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ ՂԵԿԱՎԱՐՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 5

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների օբյեկտը

1. Բուսաբանական բոլոր ցեղերի եւ տեսակների սորտերը, այդ թվում՝ մասնավորապես ցեղերի կամ տեսակների միջեւ հիբրիդները, կարող են կազմել բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների առարկան:

2. Սույն Կանոնակարգի նպատակով «սորտ» նշանակում է բույսի խմբավորում հայտնի ամենացածր դասի բուսաբանական միասնական տաքսոնի (կարգի) մեջ, որի խմբավորումը՝ անկախ այն բանից, թե բույսի սորտին առնչվող իրավունքի շնորհման համար պայմանները լիովին բավարարվում են, կարող է լինել.

այն հատկանիշների արտահայտությամբ սահմանված, որոնք բխում են տվյալ գենոտիպից կամ գենոտիպերի համակցությունից,

բույսի ցանկացած այլ խմբավորումից տարանջատված՝ նշված հատկանիշներից առնվազն մեկի արտահայտությամբ, եւ

որպես միավոր դիտարկված՝ հաշվի առնելով անփոփոխ ձեւով բազմացնելու համար դրա պիտանիությունը:

3. Բույսի խմբավորումը բաղկացած է ամբողջական բույսերից կամ բույսերի մասերից, եթե այդ մասերն ունեն ամբողջական բույսեր առաջացնելու հատկանիշներ, այսուհետ երկուսն էլ՝ «սորտի բաղկացուցիչներ»:

4. 2-րդ պարբերության առաջին պարբերությունում նշված հատկանիշների արտահայտությունը կարող է միեւնույն սորտի բաղկացուցիչների միջեւ լինել չփոփոխվող կամ փոփոխական՝ պայմանով, որ փոփոխության մակարդակը եւս բխում է գենոտիպից կամ գենոտիպերի համակցությունից:

Հոդված 6

Պաշտպանվող սորտեր

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքները շնորհվում են այն սորտերի համար, որոնք ունեն հետեւյալ հատկանիշները.

ա) տարբեր,

բ) միատեսակ,

գ) կայուն եւ

դ) նոր:

Ավելին, սորտը պետք է սահմանված լինի որեւէ անվանմամբ՝ 63-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Հոդված 7

Առանձնահատկությունը

1. Սորտը համարվում է առանձնահատուկ, եթե այն հստակ տարբերակելի է այն հատկանիշների արտահայտությամբ, որոնք բխում են որոշակի գենոտիպից կամ

զենտոիպերի համակցությունից, ցանկացած այլ սորտից, որի գոյությունը համընդհանուր իմացության առարկա է 51-րդ հոդվածի համաձայն սահմանված հայտի ամսաթվի դրությամբ,

2. Այլ սորտի գոյությունը, մասնավորապես, համարվում է համընդհանուր իմացության առարկա, եթե 51-րդ հոդվածի համաձայն սահմանված հայտի ամսաթվի դրությամբ.

ա) այն եղել է բույսի սորտի նկատմամբ իրավունքի առարկա կամ մուտքագրվել է բույսի սորտերի պաշտոնական գրանցամատյանում՝ Համայնքում կամ ցանկացած պետությունում, կամ միջկառավարական այլ կազմակերպությունում, որը համապատասխան իրավասություն ունի,

բ) բույսի սորտի նկատմամբ իրավունքի շնորհման հայտը ներկայացվել է՝ հենց դրա առնչությամբ կամ պաշտոնական նման գրանցամատյանում մուտքագրվելու նպատակով՝ պայմանով, որ հայտը ներկայացնելը հանգեցրել է այդ ընթացքում իրավունքի շնորհմանը կամ գործողությանը:

Կիրարկող կանոնները՝ 114-րդ հոդվածի համաձայն, կարող են նշել հետագա դեպքերը որպես օրինակներ, որոնք համարվում են համընդհանուր իմացության առարկա:

Հոդված 8

Միատեսակություն

Սորտը համարվում է միատեսակ, եթե, դրա բազմացման առանձնակի հատկություններից ակնկալվող փոփոխությունից կախված, այն բավականաչափ միատեսակ է այն առանձնահատկությունների արտահայտությամբ, որոնք ընդգրկված են տարբերությունն ուսումնասիրելու գործընթացում, ինչպես նաև՝ սորտի բնութագրման համար կիրառվող այլ հատկանիշներ:

Հոդված 9

Կայունություն

Սորտը համարվում է կայուն, եթե տարբերությունն ուսումնասիրելու գործընթացում ընդգրկված առանձնահատկությունների արտահայտությունը, ինչպես նաև՝ սորտի բնութագրման համար կիրառվող մյուս հատկանիշները, մնում են անփոփոխ՝ պարբերական բազմացումից հետո կամ բազմացման որոշակի շրջանի դեպքում՝ նման յուրաքանչյուր շրջանի ավարտին:

Հոդված 10

Նորությունը

1. Սորտը համարվում է նոր, եթե 51-րդ հոդվածի համաձայն սահմանված հայտի ամսաթվի դրությամբ, սորտի բաղկացուցիչները կամ սորտի հավաքված նյութերը՝ բուսաբույծի կողմից կամ նրա համաձայնությամբ չեն վաճառվել կամ տրվել այլոց տնօրինմանը՝ 11-րդ հոդվածի նշանակության շրջանակներում՝ սորտը շահագործելու նպատակներով.

ա) վերոհիշյալ ամսաթվից ավելի վաղ, քան մեկ տարի առաջ՝ Համայնքի տարածքում,

բ) ավելի վաղ, քան չորս տարի առաջ, կամ ծառերի կամ խաղողի դեպքում՝ վերոհիշյալ ամսաթվից ավելի վաղ, քան վեց տարի առաջ՝ Համայնքի տարածքից դուրս:

2. Սորտի բաղկացուցիչների տրամադրումը պաշտոնական որեւէ մարմնի՝ պարտադիր նպատակներով կամ այլոց՝ պայմանագրային կամ իրավական այլ հարաբերությունների հիմունքով՝ բացառապես արտադրության, վերարտադրության, բազմացման, ընդունված չափանիշներին համապատասխանեցման կամ պահեստավորման համար, չի համարվում այլոց կողմից տնօրինելի՝ 1-ին պարբերության նշանակության շրջանակներում՝ պայմանով, որ բուսաբույծը պահպանում է նշված եւ այլ սորտերի բաղկացուցիչների տնօրինման բացառիկ իրավունքը, եւ տնօրինմանն առնչվող հետագա գործողություններ չեն իրականացվում: Այնուհանդերձ, սորտի բաղկացուցիչների նման տնօրինումը համարվում է տնօրինում՝ 1-ին

պարբերության հիման վրա, եթե այդ բաղկացուցիչները բազմակի օգտագործվում են հիբրիդային սորտի արտադրության մեջ, եւ եթե առկա է սորտի բաղկացուցիչների կամ հիբրիդային սորտի հավաքված նյութի տնօրինում:

Նմանապես, սորտի բաղկացուցիչների տնօրինումը մեկ ընկերության կամ ֆիրմայի կողմից՝ պայմանագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության նշանակության շրջանակներում, մեկ այլ նման ընկերության կամ ֆիրմայի չի համարվում տնօրինելի այլոց կողմից, եթե նրանցից մեկն ամբողջությամբ պատկանում է մյուսին կամ երկուսն էլ ամբողջովին պատկանում են նմանատիպ երրորդ ընկերության կամ ֆիրմայի՝ պայմանով, որ տնօրինելուն առնչվող հետագա գործողություններ չեն իրականացվում: Այս դրույթը չի կիրառվում կոպտերատիվների նկատմամբ:

3. Սորտի այն բաղկացուցիչների կամ սորտի հավաքված նյութերի տնօրինումը, որոնք առաջացել են 15-րդ հոդվածի (բ) եւ (գ) կետերում նշված նպատակներով աճեցված բույսերից եւ որոնք չեն կիրառվում հետագա վերարտադրության կամ բազմացման համար, չի համարվում սորտի շահագործում, եթե միայն հղում այդ սորտին չի արվում՝ նշված տնօրինման նպատակներով:

Նմանապես, հաշվի չի առնվում այլոց կողմից տնօրինելու հարցը, եթե դա պայմանավորված է կամ հետեւանք է այն փաստի, որ բուսաբույծը ներկայացրել է նշված սորտը պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված ցուցահանդեսին՝ Միջազգային ցուցահանդեսների կոնվենցիայի նշանակության շրջանակներում, կամ անդամ պետության որեւէ ցուցահանդեսի, որը հենց այդ անդամ պետության կողմից պաշտոնապես ճանաչվել է որպես համարժեք:

ԳԼՈՒԽ II. ԻՐԱՎՈՒՆԱԿ ԱՆՁԻՆՔ

Հոդված 11

Իրավունակություն՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների նկատմամբ

1. Այն անձը, ով բուծել կամ հայտնաբերել եւ կատարելագործել է սորտը, կամ նրա իրավահաջորդը՝ երկուսն էլ՝ անձը եւ իր իրավահաջորդը, այսուհետ՝ «բուսաբույծ»,

իրավունակ են բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների նկատմամբ:

2. Եթե սորտը համատեղ բուծել կամ հայտնաբերել եւ կատարելագործել են երկու կամ ավելի անձինք, իրավունակությունը համատեղ հիմունքով վերապահվում է նրանց կամ նրանց իրավահաջորդներին: Սույն դրույթը նաեւ կիրառվում է երկու կամ ավելի անձանց նկատմամբ այն դեպքերում, երբ նրանցից մեկը կամ ավելին հայտնաբերել են սորտը, եւ մյուսը կամ մյուսները՝ կատարելագործել այն:

3. Իրավունակությունը նաեւ համատեղ հիմունքով վերապահվում է բուսաբույծին եւ ցանկացած այլ անձի կամ անձանց, եթե բուսաբույծը եւ այլ անձը կամ անձինք գրավոր հայտարարագրով համաձայնության են եկել համատեղ իրավունակության հարցի շուրջ:

4. Եթե բուսաբույծը վարձու աշխատող է, ապա բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի նկատմամբ իրավունակությունը սահմանվում է՝ աշխատանքային տվյալ հարաբերության համար կիրառելի ազգային օրենսդրության համաձայն, որի համատեքստում սորտը բուծվել կամ հայտնաբերվել եւ կատարելագործվել է:

5. Այն դեպքերում, երբ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի նկատմամբ իրավունակությունը համատեղ հիմունքով վերապահվում է երկու կամ ավելի անձանց՝ 2-4-րդ պարբերությունների համաձայն, նրանցից մեկը կամ ավելին կարող են գրավոր հայտարարագրով լիազորել մյուսներին՝ դրա նկատմամբ իրավունակությունը հայցելու համար:

Հոդված 12

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտը ներկայացնելու իրավունակություն

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտը կարող է ներկայացվել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կամ որպես իրավաբանական անձ դասակարգված ցանկացած մարմնի կողմից՝ հենց այդ մարմնի համար կիրառելի օրենսդրության համաձայն, պայմանով, որ նրանք.

ա) անդամ պետություններից մեկի քաղաքացիներ են կամ «Բույսերի նոր սորտերի պաշտպանության» միության անդամ երկրի քաղաքացիներ՝ «Բույսերի նոր սորտերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի» 1991 թվականին ընդունված ակտի 1-ին հոդվածի (xi) կետի նշանակության շրջանակներում, կամ բնակվում են կամ գտնվում են, կամ հաստատված են նման պետությունում,

բ) քաղաքացիներ են մեկ այլ այնպիսի պետության, որը չի համապատասխանում (ա) կետում նշված՝ բնակության, գտնվելու կամ հաստատված լինելու վերաբերյալ պահանջներին այնքանով, որքանով Հանձնաժողովը 36-րդ հոդվածում հիշատակված Վարչական խորհրդի եզրակացությունն ստանալուց հետո այդպիսի որոշում է կայացրել: Նման որոշումը կարող է կայացվել՝ կախված այլ պետությունից, որն ընձեռում է բուսաբանական միեւնույն կարգին պատկանող սորտերի համար պաշտպանության հնարավորություն բոլոր անդամ պետությունների քաղաքացիներին, ինչը համապատասխանում է սույն Կանոնակարգի համաձայն նախատեսված պաշտպանությանը. Հանձնաժողովը սահմանում է՝ արդյոք այդ պայմանը բավարարվել է:

2. Հայտը կարող է ներկայացվել համատեղ՝ երկու կամ ավելի նման անձանց կողմից:

ԳԼՈՒԽ III. ԲՈՒՅՍԻ ՍՈՐՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Հոդված 13

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի իրավատիրոջ իրավունքները եւ արգելված գործողությունները:

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքն այնպիսի ազդեցություն է ունենում, որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի իրավատերը կամ իրավատերերը, այսուհետ՝ «իրավատեր», ունենան 2-րդ պարբերությունում նշված գործողություններն իրականացնելու իրավունք:

2. Չհակասելով 15-րդ եւ 16-րդ հոդվածների դրույթներին՝ սորտի բաղկացուցիչների կամ պաշտպանվող սորտի հավաքված նյութի՝ երկուսն էլ

այսուհետ՝ «նյութ», առնչությամբ դիտարկվող հետեւյալ գործողությունները պահանջում են իրավատիրոջ թույլտվությունը.

ա) արտադրություն կամ վերարտադրություն (բազմացում),

բ) ընդունված չափանիշներին համապատասխանեցում՝ բազմացման նպատակով,

գ) առաջարկելը՝ իրացման համար,

դ) վաճառք կամ շուկայահանման այլ գործողություններ,

ե) արտահանումը՝ Համայնքից,

զ) ներկրումը՝ դեպի Համայնք,

է) պահեստավորումը՝ (ա)-(զ) կետերում նշված որեւէ մի նպատակով:

Իրավատերը կարող է իր թույլտվությունը դարձնել պայմաններին եւ սահմանափակումներին ենթակա:

3. 2-րդ պարբերության դրույթները կիրառվում են միայն հավաքված նյութի առնչությամբ, եթե այն ստացվել է պաշտպանվող սորտի բաղկացուցիչների չթույլատրված օգտագործման միջոցով, եւ եթե միայն իրավատերը խելամիտ հնարավորություն չի ունեցել՝ նշված սորտի բաղկացուցիչների նկատմամբ իր իրավունքը կիրառելու համար:

4. 114-րդ հոդվածին համապատասխան կանոնները կիրարկելիս կարող է նախատեսվել, որ որոշակի դեպքերում, սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթները նույնպես կիրառվում են պաշտպանվող սորտի նյութից ուղղակիորեն ստացված արտադրանքի նկատմամբ: Դրանք կարող են կիրառվել միայն այն դեպքում, եթե նման արտադրանքն ստացվել է պաշտպանվող սորտի նյութի չթույլատրված օգտագործման միջոցով, եւ եթե միայն իրավատերը չի ունեցել խելամիտ հնարավորություն՝ նշված նյութի նկատմամբ իր իրավունքը կիրառելու համար: Այնքանով, որքանով 2-րդ պարբերության դրույթները կիրառվում են ուղղակիորեն ստացված արտադրանքի նկատմամբ, դա եւս համարվում է «նյութ»:

5. 1-4-րդ պարբերությունների դրույթները եւս կիրառվում են հետեւյալի նկատմամբ.

ա) սորտեր, որոնք, ըստ էության, ստացվել են այն սորտից, որի նկատմամբ շնորհվել է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը, երբ այս սորտն ինքն ըստ էության ստացված սորտ չէ,

բ) սորտեր, որոնք, 7-րդ հոդվածի դրույթների համաձայն, տարբեր չեն պաշտպանվող սորտից, եւ

գ) սորտեր, որոնց ստեղծումը պահանջում է պաշտպանվող սորտի բազմակի օգտագործում:

6. 5 (ա) պարբերության նպատակներով սորտը համարվում է այլ սորտից ըստ էության ստացված. այսուհետ՝ «նախնական սորտ», եթե.

ա) այն առավելապես ստացված է նախնական սորտից, կամ մի այնպիսի սորտից, որն ինքը առավելապես ստացվել է նախնական սորտից,

բ) այն տարբեր է նախնական սորտից՝ 7-րդ հոդվածի դրույթների համաձայն, եւ

գ) բացառությամբ տարբերությունների, որոնք առաջանում են սորտի ստացման գործողությունից, դա էականորեն համապատասխանում է նախնական սորտին այն առանձնահատկությունների արտահայտությամբ, որը բխում է նախնական սորտի գենոտիպից կամ գենոտիպերի համակցությունից:

7. 114-րդ հոդվածի համաձայն՝ կանոնների կիրարկմամբ կարելի է մասնավորեցնել առաջացման հնարավոր գործողությունները, որոնք դասվում են առնվազն 6-րդ պարբերության դրույթների շարքին:

8. Չհակասելով 14-րդ եւ 29-րդ հոդվածներին՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքներով վերապահված իրավունքների կիրառումը չի կարող խախտել հանրային բարոյականության, հանրային քաղաքականության կամ հանրային անվտանգության, մարդկանց, կենդանիների կամ բույսերի առողջության եւ կյանքի պաշտպանության, կամ մրցակցության, առետորի կամ գյուղատնտեսական արտադրության երաշխավորման հիմքերի վրա ընդունված ցանկացած դրույթ:

Հոդված 14

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքից շեղումը

1. Անկախ 13 (2) հոդվածից եւ գյուղատնտեսական արտադրության երաշխավորման նպատակներով՝ ֆերմերներին բազմացման համար թույլատրված է օգտագործել դաշտում, ինչպես նաեւ իրենց սեփական տնտեսությունում հավաքված արտադրանքը, որը նրանք ստացել են տնկման եւ ցանքի միջոցով՝ իրենց սեփական տնտեսությունում, հիբրիդից կամ սինթետիկ սորտից տարբերվող այն սորտի նյութի բազմացմամբ, որը ներառվում է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի մեջ:

2. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են միայն գյուղատնտեսական հետեւյալ բուսատեսակների համար.

ա) Կերային մշակաբույսեր.

Սիսեռ սովորական (*Cicer arietinum* L.),

Դեղին լյուպին՝ (*Lupinus luteus* L.),

Առվույտ ցանովի (*Medicago sativa* L.),

Ոլոռ բանջարանցային՝ (*Pisum sativum* L.) (partim),

Երեքնուկ եգիպտական՝ պերսիմ (*Trifolium alexandrinum* L.),

Երեքնուկ պարսկական (*Trifolium resupinatum* L.),

Բակլա բանջարանցային՝ (*Vicia faba*),

Վիկ ցանովի՝ (*Vicia sativa* L.),

եւ Պորտուգալիայի դեպքում՝ որոմ բազմածաղիկ (*Lolium multiflorum* Lam):

բ) Հացահատիկային մշակաբույսեր.

Վարսակ՝ (*Avena sativa*),

Գարի սովորական՝ (*Hordeum vulgare* L.),

Բրինձ՝ (*Oryza sativa* L.),

Սերինոսահատ կանարյան՝ (*Phalaris canariensis* L.),

Աշորա ցանովի՝ (*Secale cereale* L.),

Աշնանացան տրիտիկալե՝ (*X Triticosecale* Wittm.), - Տրիտիկալե,

Փափուկ ցորեն՝ (*Triticum aestivum* L. emend. Fiori et Paol.) Յորեն,

Կարծր ցորեն (*Triticum durum* Desf.),

Հաճար՝ (*Triticum spelta* L.),

զ) Կարտոֆիլ.

Կարտոֆիլ՝ (*Solanum tuberosum*):

դ) Յուղատու եւ թելատու մշակաբույսեր.

Գոնգեղ՝ (*Brassica napus* L.) (partim),

Շաղգամ՝ (*Brassica rapa* L.) (partim),

Կտավատի սերմ՝ (*Linum usitatissimum*) բացառելով վուշը:

3. 1-ին պարբերության մեջ նախատեսված վերապահումը կիրառելու եւ բուսաբույժի ու ֆերմերի օրինական շահերը երաշխավորելու նպատակով ստեղծվում են պայմաններ մինչեւ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը՝ 114-րդ հոդվածի համաձայն կանոնների կիրարկման ընթացքում հետեւյալ չափորոշիչների հիման վրա.

չկա ֆերմերի տնտեսավարման մակարդակի քանակական ոչ մի սահմանափակում այնքանով, որքանով անհրաժեշտ է՝ տնտեսավարման տվյալ գործունեության պահանջների համաձայն,

-հավաքված արտադրանքը կարող է մշակվել տնկելու նպատակով՝ կամ հենց ֆերմերի կողմից կամ նրան մատուցված ծառայությունների միջոցով՝ չհակասելով այն որոշակի սահմանափակումներին, որոնք անդամ պետությունները կարող են ստեղծել նշված հավաքված արտադրանքի մշակման գործընթացի կազմակերպման առնչությամբ, մասնավորապես՝ մշակման համար մուտք արված արտադրանքի եւ մշակման արդյունքում առաջացած արտադրանքի նույնականությունն ապահովելու նպատակով:

Ֆոքր ֆերմերներից չի պահանջվում իրավատիրոջը որեւէ վարձատրություն տալ. համարվում է, որ ֆոքր ֆերմերները լինում են.

սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված բուսատեսակների դեպքում, որոնց համար կիրառվում է Խորհրդի (ԵՏՀ) 1992 թվականի հունիսի 30-ի թիվ 1765/92 կանոնակարգը, որով սահմանվում է օժանդակության համակարգ՝ որոշակի վարելահողային մշակաբույսեր⁴ ստեղծողների համար, այն ֆերմերները, ովքեր չեն աճեցնում բույսեր ավելի մեծ տարածքի վրա, քան անհրաժեշտ կլինի 92 տոննա մշակաբույս աճեցնելու համար. նրանց տարածքի հաշվարկի համար կիրառվում է նշված կանոնակարգի 8 (2) հոդվածը.

սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված այլ բուսատեսակների դեպքում՝ այն ֆերմերները, ովքեր համապատասխանում են նմանատիպ համեմատելի չափորոշիչներին,

այլ ֆերմերներից պահանջվում է իրավատիրոջը տալ համարժեք վարձատրություն, որն էականորեն ցածր կլինի նույն տարածքում միեւնույն սորտի բազմացման նյութի արտոնագրված արտադրության համար գանձվող գումարից. նշված համարժեք վարձատրության փաստացի մակարդակը կարող է ժամանակի ընթացքում ենթակա լինել փոփոխության՝ հաշվի առնելով այն սահմանը, որի դեպքում հարկ կլինի օգտվել 1-ին պարբերության մեջ նախատեսված վերապահումից՝ տվյալ սորտի առնչությամբ.

դիտանցման համապատասխանությունը սույն հոդվածի դրույթներին կամ սույն հոդվածի համաձայն ընդունված դրույթներին, իրավատերերի բացառիկ պատասխանատվության առարկա է. նշված դիտանցումը կազմակերպելու հարցում նրանք պաշտոնական մարմինների կողմից աջակցություն չեն կարող հայցել,

իրավատերերին՝ իրենց պահանջի դեպքում, տրամադրվում է համապատասխան տեղեկատվություն, ֆերմերների եւ մշակմանն առնչվող ծառայությունները մատուցողների կողմից. համապատասխան տեղեկատվությունը հավասարապես կարող է տրամադրվել գյուղատնտեսական գործունեության դիտանցման մեջ ներգրավված՝ պաշտոնական մարմինների կողմից, եթե նման տեղեկատվություն ձեռք է բերվել նրանց առաջադրանքների սովորական ձեւով իրականացման ընթացքում՝ առանց լրացուցիչ բեռի կամ ծախսերի. Այս դրույթները չեն հակասում

⁴ՊՏ թիվ L 181, 01. 07. 1992թ., էջ 12: Վերջին անգամ թիվ 1552/93 (ԵՏՀ) կանոնակարգով (ՊՏ թիվ L 154, 25.06. 1993թ., էջ 19) փոփոխված կանոնակարգ:

անհատների պաշտպանության մասին Համայնքի եւ ազգային օրենսդրությանը՝ անձնական տվյալների մասով՝ հաշվի առնելով անձնական տվյալների մշակումն ու ազատ տեղաշարժը:

Հոդված 15

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների գործողությունների սահմանափակումը

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքները չեն տարածվում մինչեւ.

ա) մասնավոր եւ ոչ առետրային նպատակներով իրականացվող գործողություններ,

բ) փորձարարական նպատակներով իրականացվող գործողություններ,

գ) այլ սորտերի բուծման կամ հայտնաբերման եւ կատարելագործման նպատակով իրականացվող գործողություններ,

դ) 13–րդ հոդվածի 2–4–րդ կետերում նշված գործողություններ՝ նման այլ սորտերի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 13⁵ հոդվածի դրույթները, կամ երբ այլ սորտ կամ այս սորտի նյութը դասակարգվում է սեփականության իրավունքի պաշտպանության ներքո, որը չի ներառում համեմատելի դրույթ, եւ

ե) գործողություններ, որոնց արգելումը կխախտի 13 (8), 14 կամ 29 հոդվածներում նշված դրույթները:

Հոդված 16

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների դադարում

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը չի տարածվում մինչեւ այն գործողությունները, որոնք վերաբերում են պաշտպանվող սորտի ցանկացած նյութի, կամ 13 (5) հոդվածով կարգավորվող սորտի, որն իրավատիրոջ կողմից

⁵ ՊՏ թիվ 17, 06. 10. 1958թ., էջ 385/58: 1985թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված կանոնակարգ:

կամ նրա համաձայնությամբ տրամադրվել է այլոց տնօրինմանը Համայնքի որեւէ հատվածում, կամ նշված նյութից ծագած որեւէ նյութի, եթե միայն նման գործողությունները.

ա) չեն ներառում տվյալ սորտի հետագա բազմացմանն առնչվող քայլեր, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ բազմացումը նախատեսվել է նյութի տնօրինման ժամանակ կամ

բ) չեն ներառում սորտի բաղկացուցիչների արտահանման միջոցառումներ մի այնպիսի երրորդ երկիր, որը բույսի այն ցեղի կամ տեսակի սորտերի համար պաշտպանություն չի ապահովում, որին պատկանում է տվյալ սորտը, բացառությամբ այն դեպքերի, երբ արտահանվող նյութերը վերջնական սպառման նպատակների համար են:

Հոդված 17

Սորտի անվանումների կիրառում

1. Ցանկացած անձ, ով Համայնքի տարածքում առեւտրային նպատակներով առաջարկում կամ այլոց տնօրինմանն է տրամադրում պաշտպանվող սորտի բաղկացուցիչները կամ 13 (5) հոդվածի դրույթներով կարգավորվող սորտը, պետք է օգտագործի սորտի սահմանված անվանումը՝ 63-րդ հոդվածի համաձայն. գրավոր կիրառվելու դեպքում սորտի անվանումը պետք է լինի հեշտ տարբերակելի եւ հստակ ընթեռնելի: Եթե ապրանքային նշանը, առեւտրային անվանումը կամ նմանատիպ նշումը կապակցված են սահմանված անվանման հետ, ապա վերջինս պետք է լինի հեշտ ճանաչելի՝ որպես այդպիսին:

2. Ցանկացած անձ, ով իրականացնում է նման գործողություններ սորտի որեւէ նյութի առնչությամբ, պետք է տեղեկացնի այդ անվանման մասին՝ օրենքով սահմանված այլ դրույթների համաձայն, կամ եթե պահանջ է ներկայացվել իշխանության, գնորդի կամ օրինական շահ ունեցող մեկ այլ անձի կողմից:

3. 1-ին եւ 2-րդ պարբերությունները կիրառվում են նույնիսկ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի դադարումից հետո:

Հոդված 18

Սորտի անվանումների օգտագործման սահմանափակում

1. Իրավատերը կարող է չկիրառել շնորհված որեւէ իրավունք՝ այնպիսի անվանման նկատմամբ, որը նույնական է սորտի անվանման հետ, որը խոչընդոտում է սորտի առնչությամբ այդ անվանման ազատ կիրառումը՝ նույնիսկ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի դադարումից հետո:
2. Որեւէ երրորդ կողմ կարող է կիրառել շնորհված որեւէ իրավունք՝ այնպիսի անվանման նկատմամբ, որը նույնական է սորտի անվանման հետ, որը խոչընդոտում է այդ անվանման ազատ կիրառումը, եթե միայն այդ իրավունքը շնորհվել է սորտի անվանման սահմանումից առաջ՝ համաձայն 63-րդ հոդվածի:
3. Այն դեպքերում, եթե սորտը պաշտպանված է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքով կամ անդամ պետության մեջ կամ «Բույսերի նոր սորտերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի» անդամ երկրի մեջ՝ ազգային սեփականության իրավունքով, Համայնքի տարածքում չեն կարող օգտագործվել ոչ դրա սահմանված անվանումը կամ ոչ էլ այնպիսի սահմանում, որը կարող է խեղաթյուրել այն՝ բուսաբանական միեւնույն տեսակի այլ սորտի առնչությամբ, կամ մի տեսակի, որը դիտարկվում է 63 (5) հոդվածի համաձայն արված հրապարակման շրջանակներում, կամ նման սորտի նյութի համար:

ԳԼՈՒԽ IV. ԲՈՒՅՍԻ ՍՈՐՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Հոդված 19

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների տեսողություն

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի ժամկետը տեւում է մինչեւ 25-րդ օրացուցային տարվա ավարտը, իսկ խաղողի եւ ծառատեսակների դեպքում՝ մինչեւ օրացուցային 30-րդ տարվա ավարտը՝ շնորհման տարվանից սկսած:

2. Խորհուրդը, գործելով ձայների որակյալ մեծամասնությամբ Հանձնաժողովից ստացված առաջարկի վերաբերյալ, կարող է նախատեսել այս ժամկետների երկարաձգում մինչև լրացուցիչ հինգ տարով՝ որոշակի ցեղերի կամ տեսակների կապակցությամբ:

3. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի ժամկետը լրանում է 1-ին պարբերության մեջ կամ 2-րդ պարբերության համաձայն նշված ժամկետները լրանալուց առաջ, եթե իրավատերը հրաժարվում է դրանից՝ Գրասենյակին նման գործողության մասին գրավոր հայտարարագիր ուղարկելու միջոցով, որը գործողության մեջ է մտնում սկսած այն օրվանից, որը հաջորդում է Գրասենյակի կողմից հայտարարագիրը ստանալու օրվան:

Հոդված 20

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների անվավերություն

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը Գրասենյակը ճանաչում է անվավեր եւ առոչինչ, եթե այն սահմանել է.

ա) որ 7-րդ կամ 10-րդ հոդվածներում նշված պայմանները չեն բավարարվել բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի գործողության ընթացքում կամ

բ) որ եթե բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման գործընթացն էականորեն հիմնված է եղել հայտատուի կողմից տրամադրված տեղեկատվության եւ փաստաթղթերի վրա, 8-րդ եւ 9-րդ հոդվածներում նշված պայմանները չեն բավարարվել իրավունքի շնորհման ընթացքում կամ

գ) որ իրավունքը շնորհվել է մի անձի, ով չունի դրա նկատմամբ իրավունակություն, եթե միայն այդ իրավունքը չի փոխանցվել մի անձի, ով ունի համապատասխան իրավունակություն:

2. Եթե բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը ճանաչվում է անվավեր եւ առոչինչ, համարվում է, որ հենց ամենասկզբից այն չի ունեցել սույն Կանոնակարգով սահմանված գործողությունը:

Հոդված 21

Քույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքները չեղյալ հայտարարելը

1. Գրասենյակը չեղյալ է հայտարարում քույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը, եթե այն սահմանում է, որ չկա համապատասխանություն 8-րդ կամ 9-րդ հոդվածում նշված պայմաններին: Եթե սահմանվում է, որ արդեն այլևս չկա համապատասխանություն այս պայմաններին՝ չեղյալ հայտարարելուն նախորդող պահի դրությամբ, չեղյալ հայտարարելու որոշումը կարող է գործողության մեջ դրվել հենց այդ պահից սկսած:

2. Գրասենյակը կարող է չեղյալ հայտարարել քույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը՝ ապագայում գործողության մեջ դնելու համար, եթե իրավատերը նման պահանջ ստանալուց հետո եւ Գրասենյակի կողմից սահմանված ժամկետի ընթացքում.

ա) չի կատարել պարտավորությունը՝ համաձայն 64 (3) հոդվածի կամ

բ) 66-րդ հոդվածում նշված դեպքում չի առաջարկում սորտի այլ հարմար անվանում կամ

գ) չի կատարում այն մոծումները, որոնք կարող են վճարվել՝ քույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքն ուժի մեջ պահելու համար կամ

դ) թե՛ սկզբնական իրավատերը եւ թե՛ նրա իրավահաջորդը 23-րդ հոդվածի համաձայն իրականացվող իրավունքի փոխանցման արդյունքում այլևս չեն համապատասխանում 12-րդ եւ 82-րդ հոդվածներում նշված պայմաններին:

**ԳԼՈՒԽ V. ԲՈՒՅՍԻ ՍՈՐՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝
ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

Հոդված 22

Նմանեցումը՝ ազգային օրենսդրությանը

1. Բացառությամբ 23-ից մինչև 29-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը՝ որպես սեփականության օբյեկտ, դիտարկվում է բոլոր առումներով եւ Համայնքի ամբողջ տարածքի համար՝ որպես համապատասխան սեփականության իրավունք անդամ պետության մեջ, որտեղ.

ա) բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների գրանցամատյանի մեջ մուտքագրման համաձայն՝ իրավատերը բնակվել կամ գտնվել կամ հաստատված է եղել համապատասխան ամսաթվի դրությամբ, կամ

բ) եթե (ա) ենթապարբերության մեջ սահմանված պայմանները չեն կատարվում, իրավատիրոջ՝ ընթացակարգով առաջինը նշված ներկայացուցիչը, ինչպես նշված է վերոհիշյալ գրանցամատյանում, բնակվել կամ գտնվել կամ հաստատված է եղել գրանցման ամսաթվով:

2. Եթե 1-ին պարբերության մեջ նշված պայմանները չեն կատարվում, ապա 1-ին պարբերության մեջ նշված անդամ պետությունը կլինի հենց այն անդամ պետությունը, որտեղ գտնվում է/տեղակայված է Գրասենյակը:

3. Եթե 1-ին պարբերության մեջ նշված գրանցամատյանում մուտքագրվում են երկու կամ ավելի անդամ պետություններում բնակվելու, գտնվելու կամ հաստատված լինելու վայրերի մասին տվյալներ՝ իրավատիրոջ կամ ընթացակարգով սահմանված ներկայացուցիչների վերաբերյալ, 1-ին պարբերության նպատակներով կիրառվում է բնակվելու կամ գտնվելու առաջին հիշատակված վայրի տվյալը:

4. Եթե 1-ին պարբերության մեջ նշված գրանցամատյանում մուտք են արվում երկու կամ ավելի անձանց տվյալներ՝ որպես համատեղ իրավատերեր, համապատասխան իրավատերը՝ 1 (ա) պարբերությունը կիրառելու նպատակներով, լինում է առաջին համատեղ իրավատերը՝ գրանցամատյանում մուտքագրվելու համար, ով կատարում է համապատասխան պայմանները: Եթե համատեղ իրավատերերից ոչ մեկը չի կատարում 1 (ա) պարբերության մեջ նշված պայմանները, կիրառվում է 2-րդ պարբերությունը:

Հոդված 23

Փոխանցում

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը կարող է լինել փոխանցման օբյեկտ մեկ կամ ավելի իրավահաջորդներին:
2. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը կարող է փոխանցվել նշանակման միջոցով միայն այն իրավահաջորդներին, ովքեր համապատասխանում են 12-րդ եւ 82-րդ հոդվածներում նշված պայմաններին: Դա գրավոր է իրականացվում եւ պահանջվում է պայմանագրի կողմերի ստորագրությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա վճռի արդյունք է կամ դատական վարույթները դադարեցնող ցանկացած այլ գործողություն: Այլապես, դա առոչինչ է:
3. Բացառությամբ 100-րդ հոդվածով նախատեսված դեպքերի՝ փոխանցումը չի ունենում որեւէ առնչություն այն իրավունքների հետ, որոնք ձեռք են բերվել երրորդ կողմերի կողմից փոխանցման ամսաթվից առաջ:
4. Փոխանցումը գործողության մեջ չի մտնում Գրասենյակի համար եւ չի կարող նշվել երրորդ կողմերի նկատմամբ, եթե միայն չի տրամադրվում դրա՝ փաստաթղթերով հիմնավորված ապացույց, ինչպես նախատեսված է կիրարկող կանոնների համաձայն, եւ եթե դրա մասին տվյալները չեն մուտքագրվում բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների գրանցամատյանի մեջ: Փոխանցումը, որի մասին տվյալներ դեռ չեն մուտքագրվել գրանցամատյանի մեջ, այնուամենայնիվ, կարելի է նշել այն երրորդ կողմերի նկատմամբ, որոնք ձեռք են բերել իրավունքները փոխանցման ամսաթվից հետո, բայց տեղյակ են եղել փոխանցման մասին այն ամսաթվին, որի դրությամբ նրանք ձեռք են բերել այդ իրավունքները:

Հոդված 24

Բռնագանձում

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի վրա կարող է բռնագանձում տարածվել, եւ այդ իրավունքը կարող է լինել ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցների առարկան՝ «Քաղաքացիական եւ առետրային գործերով իրավասության ու վճիռների կատարման մասին» կոնվենցիայի 24-րդ հոդվածի նշանակության շրջանակներում՝ ստորագրված 1988 թվականի սեպտեմբերի 16-ին Լուզանոյում, այսուհետ՝ «Լուզանոյի կոնվենցիա»:

Հոդված 25

Սնանկության կամ նմանատիպ վարույթներ

Մինչեւ այս ոլորտում անդամ պետությունների համար ընդհանուր կանոններն ուժի մեջ մտնելը, միակ անդամ պետությունը, որտեղ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը կարող է ընդգրկվել սնանկության կամ նմանատիպ վարույթներում, այն պետությունն է, որտեղ նման վարույթներն առաջինն են հարուցվում՝ այս ոլորտում կիրառվող ազգային օրենսդրության կամ կոնվենցիաների նշանակության շրջանակներում:

Հոդված 26

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի՝ որպես սեփականության օբյեկտի, հայտը

22-ից մինչեւ 25-րդ հոդվածները կիրառվում են բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների հայտերի համար: Ինչ վերաբերում է նման հայտերին, ապա այդ հոդվածների մեջ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների գրանցամատյանին արված հղումները դիտարկվում են որպես

հղումներ՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների համար ներկայացվող հայտի գրանցամատյանին:

Հոդված 27

Շահագործման պայմանագրային իրավունքներ

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքներով կարող են ձեռավորվել պայմանագրով շնորհված շահագործման իրավունքների ամբողջական առարկան կամ դրա մի մասը: Շահագործման իրավունքները կարող են լինել բացառիկ կամ ոչ բացառիկ:

2. Իրավատերը կարող է վկայակոչել բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքով վերապահված իրավունքները շահագործման իրավունքը կիրառող որեւէ անձի նկատմամբ, ով խախտում է շահագործման իր իրավունքին համադրված պայմաններից կամ սահմանափակումներից որեւէ մեկը՝ 1-ին պարբերության համաձայն:

Հոդված 28

Համատեղ բաժնետիրություն

22- 27-րդ հոդվածները կիրառվում են համապատասխան փոփոխություններով՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար համատեղ բաժնետիրության դեպքում՝ ունեցած համապատասխան բաժնեմասին համամասնորեն, եթե այդ բաժնեմասերը սահմանվել են:

Հոդված 29

Պարտադիր շահագործման իրավունքը

1. Պարտադիր շահագործման իրավունքները շնորհվում են մեկ կամ ավելի անձանց Գրասենյակի կողմից՝ այդ անձի կամ անձանց կողմից ներկայացված հայտի հիման վրա, բայց միայն հանրային շահի հիմունքով եւ 36-րդ հոդվածում նշված Վարչական խորհրդի հետ խորհրդակցելուց հետո:

2. Անդամ պետության, Հանձնաժողովի կամ Համայնքի մակարդակով ստեղծված եւ Հանձնաժողովի կողմից գրանցված որեւէ կազմակերպության կողմից ներկայացված հայտի հիման վրա կարող է շնորհվել պարտադիր շահագործման իրավունք՝ որոշակի պահանջներին համապատասխանող անձանց կատեգորիայի, կամ մեկ կամ ավելի անդամ պետության մեջ կամ Համայնքում՝ ցանկացած անձի: Այն կարող է շնորհվել միայն հանրային շահի հիմունքով եւ Վարչական խորհրդի հաստատմամբ:

3. Գրասենյակը, պարտադիր շահագործման իրավունքը շնորհելիս, սահմանում է դրանով պայմանավորված գործողությունների տիպը եւ հստակեցնում դրան առնչվող խելամիտ պայմանները, ինչպես նաեւ՝ 2-րդ պարբերության մեջ նշված հատուկ պահանջները: Խելամիտ պայմանների շարքում հաշվի են առնվում բույսի սորտի նկատմամբ իրավունքների ցանկացած իրավատիրոջ շահերը, ում գործունեությունն ազդեցություն է կրում պարտադիր շահագործման իրավունքի շնորհումից: Նշված խելամիտ պայմանները կարող են ներառել ժամանակային հնարավոր սահմանափակումը, համապատասխան հեղինակային վարձատրության վճարումը՝ որպես համարժեք վարձատրություն իրավատիրոջը, եւ կարող են սահմանել պարտավորություններ իրավատիրոջ նկատմամբ, որոնց իրականացումն անհրաժեշտ է՝ պարտադիր շահագործման իրավունքից օգտվելու համար:

4. Պարտադիր շահագործման իրավունքի շնորհումից հետո յուրաքանչյուր մեկամյա ժամանակահատվածի ժամկետը լրանալուն պես եւ վերոհիշյալ ժամանակային հնարավոր սահմանափակման ընթացքում, վարույթի կողմերից յուրաքանչյուրը կարող է պահանջել, որ պարտադիր շահագործման իրավունքի շնորհման մասին որոշումը չեղյալ հայտարարվի կամ փոփոխվի: Նման պահանջի միակ հիմքն այն է, որ ընդունված որոշումը պայմանավորող հանգամանքներն այդ ընթացքում փոփոխության են ենթարկվել:

5. Հայտի հիման վրա պարտադիր շահագործման իրավունքը շնորհվում է իրավատիրոջը՝ ըստ էության ստացված սորտի առնչությամբ, եթե 1-ին պարբերության մեջ նշված չափանիշները բավարարվում են: 3-րդ պարբերության մեջ նշված խելամիտ պայմանները ներառում են նախնական սորտի իրավատիրոջը համապատասխան հեղինակային վարձատրության վճարումը՝ որպես համարժեք վարձատրություն:

6. 114-րդ հոդվածի համաձայն կիրարկող կանոններով կարող են հստակեցվել որոշակի դեպքեր՝ որպես 1-ին պարբերության մեջ հիշատակված հանրային շահի օրինակներ եւ նույնիսկ վերոհիշյալ պարբերությունների դրույթների կիրարկման համար մանրամասներ նշվել:

7. Պարտադիր շահագործման իրավունքները չեն կարող շնորհվել անդամ պետությունների կողմից՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների առնչությամբ:

ՄԱՍ ԵՐԵՔ. ԲՈՒՅՍԻ ՍՈՐՏԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԳԼՈՒԽ Լ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 30

Իրավական կարգավիճակ, ստորաբաժանումներ

1. Գրասենյակը Համայնքի մարմին է: Այն ունի իրավասություններ:
2. Յուրաքանչյուր անդամ պետության մեջ Գրասենյակն օժտված է այդ պետությունների իրավունքի նորմերով իրավաբանական անձանց տրամադրված ամենալայն իրավունակությամբ: Մասնավորապես, այն կարող է ձեռք բերել կամ տնօրինել շարժական եւ անշարժ գույք եւ լինել դատական վարույթների կողմ:
3. Գրասենյակը ներկայացնում է դրա Նախագահը:
4. 36-րդ հոդվածում նշված Վարչական խորհրդի համաձայնությամբ՝ Գրասենյակը կարող է լիազորել ազգային գործակալություններին՝ իրականացնելու Գրասենյակի որոշակի վարչական գործառույթներ, կամ այդ նպատակով ստեղծել իր սեփական ստորաբաժանումներն անդամ պետություններում՝ վերջիններիս համաձայնությամբ:

Հոդված 31

Անձնակազմ

1. Եվրոպական համայնքների պաշտոնատար անձանց Ներքին կանոնակարգը, Եվրոպական համայնքների այլ ծառայողների աշխատանքային պայմանները եւ դրանք գործողության մեջ դնելու նպատակով Եվրոպական համայնքների կառույցների կողմից համատեղ ընդունված կանոնները կիրառվում են Գրասենյակի անձնակազմի նկատմամբ՝ չսահմանափակելով 47-րդ հոդվածի կիրառումը Բողոքարկման խորհրդի անդամների նկատմամբ:

2. Չսահմանափակելով 43-րդ հոդվածի գործողությունը՝ Ներքին կանոնակարգով եւ այլ ծառայողների աշխատանքային պայմաններով նշանակող մարմնին վերապահված լիազորությունները կիրառվում են Գրասենյակի կողմից՝ իր իսկ աշխատակազմի նկատմամբ:

Հոդված 32

Արտոնություններ եւ անձեռնմխելիություն

Գրասենյակի նկատմամբ կիրառվում է Եվրոպական համայնքների «Արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին» արձանագրությունը:

Հոդված 33

Պատասխանատվություն

1. Գրասենյակի պայմանագրային պարտավորությունները կարգավորվում են տվյալ պայմանագրի նկատմամբ կիրառվող օրենսդրությամբ:

2. Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանը Գրասենյակի կողմից կնքված պայմանագրով սահմանված ցանկացած արբիտրաժային դրույթի համաձայն, իրավասու է վճիռ կայացնելու:

3. Ոչ պայմանագրային պարտավորությունների դեպքում Գրասենյակը, անդամ պետությունների օրենքների համար ընդհանուր սկզբունքներին համապատասխան, փոխհատուցում է իր բաժինների կամ իր ծառայողների կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում պատճառված ցանկացած վնաս:

4. 3-րդ պարբերության մեջ նշված վնասի փոխհատուցմանը վերաբերող վեճերի նկատմամբ իրավասությունը պատկանում է Արդարադատության դատարանին:

5. Գրասենյակի հանդեպ ծառայողների անձնական պատասխանատվությունը կարգավորվում է իրենց Ներքին կանոնակարգով կամ իրենց նկատմամբ կիրառվող Աշխատանքային պայմաններով սահմանված դրույթներով:

Հոդված 34

Լեզուներ

1. 1958 թվականի ապրիլի 15-ի թիվ 1 Կանոնակարգում նշված դրույթները, որոնցով սահմանվում են Եվրոպական Տնտեսական Համայնքում (5) օգտագործվող լեզուները, կիրառվում են Գրասենյակի գործունեության առնչությամբ:

2. Գրասենյակին ներկայացվող հայտերը, դրանց ընթացք տալու համար պահանջվող փաստաթղթերը եւ տրամադրվող մնացած բոլոր փաստաթղթերը ներկայացվում են Եվրոպական Համայնքի պաշտոնական լեզուներից որեւէ մեկով:

3. Գրասենյակում իրականացվող վարույթների կողմերը, ինչպես սահմանված է 114-րդ հոդվածի համաձայն գործող կիրարկող կանոններում, իրավասու են իրականացնելու գրավոր եւ բանավոր վարույթներ Եվրոպական Համայնքի պաշտոնական լեզուներից որեւէ մեկով՝ այդ լեզվից թարգմանություն, իսկ լսումների դեպքում՝ համաժամանակյա թարգմանություն կատարելու միջոցով՝ Եվրոպական Համայնքի պաշտոնական լեզուներից առնվազն մեկ ուրիշ լեզվի, որն ընտրում է վարույթի ցանկացած այլ կողմ: Այս իրավունքների կիրառումը վարույթների կողմերի համար չի ենթադրում հատուկ վճարների գանձում :

4. Գրասենյակի գործունեության համար պահանջվող թարգմանչական ծառայությունները հիմնականում ապահովվում են Միության մարմինների Թարգմանությունների կենտրոնի կողմից:

Հոդված 35

Գրասենյակի որոշումներ

1. Գրասենյակի որոշումները՝ պայմանով, որ դրանք չպետք է կայացվեն Բողոքարկման Խորհրդի կողմից՝ 72-րդ հոդվածի համաձայն, կայացվում են Գրասենյակի նախագահի կողմից կամ նրա թույլտվությամբ:
2. 1-ին պարբերության համաձայն՝ 20-րդ, 21-րդ, 29-րդ, 59-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 66-րդ կամ 100-րդ (2) հոդվածներով նախատեսված որոշումները կայացվում են Գրասենյակի անձնակազմի երեք անդամից բաղկացած Կոմիտեի կողմից: Նման կոմիտեի անդամների որակավորումները, առանձին անդամների լիազորությունները որոշումների կայացման նախապատրաստական փուլում, քվեարկության պայմանները եւ նախագահի դերն այդ Կոմիտեի գործունեության հարցում որոշվում են կիրարկող կանոններով՝ ըստ 114-րդ հոդվածի: Այլապես, այս Կոմիտեի անդամներն իրենց որոշումները կայացնելիս չեն պարտավորվում այլ ցուցումներով:
3. 2-րդ պարբերության մեջ նշված որոշումներից տարբերվող Նախագահի որոշումները, եթե չեն կայացվում նախագահի կողմից, ապա կարող են կայացվել Գրասենյակի անձնակազմի այն անդամի կողմից, ում փոխանցվել է դա անելու լիազորությունը՝ ըստ 42-րդ (2) (ը) հոդվածի:

ԳԼՈՒԽ II. ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հոդված 36

Ստեղծում եւ լիազորություններ

1. Սույնով Գրասենյակին առընթեր ստեղծվում է Վարչական խորհուրդ: Ի լրումն Վարչական Խորհրդին վերապահված լիազորությունների՝ սույն Կանոնակարգի այլ դրույթներով կամ 113-րդ եւ 114-րդ հոդվածներում նշված դրույթներով, այն ունենում է ստորեւ սահմանված հետեւյալ լիազորությունները՝ Գրասենյակի նկատմամբ.

ա) այն տրամադրում է խորհրդատվություն այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնց համար պատասխանատու է Գրասենյակը, կամ այս առումով թողարկում է ընդհանուր ուղեցույցներ:

բ) Այն ուսումնասիրում է Նախագահի՝ կառավարման վերաբերյալ զեկույցը եւ նույնիսկ դիտանցում է Գրասենյակի գործունեությունը՝ նշված ուսումնասիրության եւ ձեռք բերված ցանկացած այլ տեղեկատվության հիման վրա:

գ) Գրասենյակից ստացված առաջարկի հիման վրա, այն կամ որոշում է 35-րդ հոդվածում նշված կոմիտեների թիվը, աշխատանքի բաշխումը եւ նրանց համապատասխան գործառույթի տեսողությունը, կամ, այս առումով, թողարկում է ընդհանուր ուղեցույցներ:

դ) Այն կարող է սահմանել կանոններ՝ Գրասենյակի աշխատանքային մեթոդների վերաբերյալ:

ե) Այն կարող է թողարկել փորձաստուգման ուղեցույցներ՝ 56 (2) հոդվածի համաձայն:

2. Վարչական խորհուրդը նույնիսկ.

կարող է Գրասենյակին կամ Հանձնաժողովին եզրակացություններ տրամադրել եւ նրանցից պահանջել տեղեկություններ, եթե այն դա անհրաժեշտ համարի,

կարող է Հանձնաժողովին ներկայացնել փոփոխություններով կամ առանց դրանց, իրեն տրամադրված փաստաթղթերի նախագծերը՝ համաձայն 42 (2) (է) հոդվածի, կամ փոփոխությունների իր սեփական նախագիծը՝ սույն Կանոնակարգի վերաբերյալ, 113-րդ եւ 114-րդ հոդվածներում նշված դրույթների կամ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքներին առնչվող այլ կանոնների վերաբերյալ,

ապահովում է խորհրդատվություն՝ 113 (4) եւ 114 (2) հոդվածների համաձայն,

իրականացնում է իր գործառույթները՝ կապված Գրասենյակի բյուջեի հետ՝ 109-րդ, 111-րդ եւ 112-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 37

Կազմ

1. Վարչական խորհուրդը բաղկացած է յուրաքանչյուր անդամ պետության եւ Հանձնաժողովի մեկական ներկայացուցից եւ նրանց փոխարինողներից:
2. Վարչական խորհրդի անդամներին կարող են օժանդակել խորհրդականներ կամ փորձագետներ՝ խորհրդի ընթացակարգային կանոնների դրույթների համաձայն:

Հոդված 38

Նախագահություն

1. Վարչական խորհուրդն իր անդամներից ընտրում է նախագահ եւ փոխնախագահ: Փոխնախագահն ի պաշտոնե փոխարինում է նախագահին՝ նրա պարտականությունների կատարման անհնարինության դեպքում:
2. Նախագահի կամ փոխնախագահի պաշտոնավարման ժամկետները լրանում են այն ժամանակ, երբ դադարում է նրանց համապատասխան անդամակցությունը Վարչական խորհրդին: Չհակասելով սույն դրույթին՝ նախագահի կամ փոխնախագահի պաշտոնավարման ժամկետների տեւողությունը երեք տարի է, եթե միայն մինչեւ նշված ժամանակահատվածի ավարտը այլ նախագահ կամ փոխնախագահ չի ընտրվում: Նրանց պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել:

Հոդված 39

Նիստեր

1. Վարչական խորհրդի նիստերը հրավիրում է Նախագահը:
2. Գրասենյակի նախագահը մասնակցում է քննարկումներին, եթե միայն Վարչական խորհուրդն այլ որոշում չի ընդունում: Նա քվեարկելու իրավունք չունի:
3. Վարչական խորհուրդը տարեկան մեկ անգամ անց է կացնում հերթական նիստ. բացի դրանից, նիստեր հրավիրվում են նաեւ նախագահի

նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի կամ անդամ պետությունների մեկ երրորդի պահանջով:

4. Այն ընդունում է ընթացակարգային կանոններ եւ այս կանոնների համաձայն՝ կարող է ստեղծել կոմիտեներ՝ իր իրավասության ներքո:

5. Վարչական խորհուրդը կարող է իր նիստերին մասնակցելու նպատակով դիտորդներ հրավիրել:

6. Վարչական խորհրդի քարտուղարությունն ապահովում է Գրասենյակը:

Հոդված 40

Նիստերի անցկացման վայրը

Վարչական խորհուրդը նիստերն անց է կացնում Հանձնաժողովի նստավայրում կամ Գրասենյակի կամ Փորձաքննությունների իրականացման գրասենյակի գտնվելու վայրում: Մանրամասները սահմանվում են ընթացակարգային կանոններում:

Հոդված 41

Քվեարկություն

1. Վարչական խորհուրդը կայացնում է իր այն որոշումները, որոնք այլ են 2-րդ պարբերության մեջ նշված որոշումներից՝ անդամ պետությունների ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությամբ:

2. Պահանջվում է անդամ պետությունների ներկայացուցիչների ձայների երեք քառորդ մեծամասնությունն այն որոշումների համար, որոնք Վարչական խորհուրդը լիազորված է կայացնելու 12 (1) (բ), 29, 36 (1) (ա), (բ), (դ) եւ (ե), 43, 47, 109 (3) եւ 112 հոդվածների համաձայն:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն ունի մեկ ձայնի իրավունք:

4. Վարչական խորհրդի որոշումները չունեն պարտադրող ուժ՝ Պայմանագրի 189-րդ հոդվածի նշանակության շրջանակներում:

Հոդված 42

Նախագահի գործառույթներ և լիազորություններ

1. Գրասենյակի կառավարումն իրականացնում է նախագահը:
2. Այս նպատակով նախագահը, մասնավորապես, ունի հետևյալ գործառույթները և լիազորությունները՝
 - ա) Նախագահը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր քայլերը, այդ թվում՝ ներքին վարչական ցուցումների ընդունումը և ծանուցումների հրապարակումը՝ Գրասենյակի գործունեությունն ապահովելու նպատակով՝ սույն Կանոնակարգի դրույթների, 113-րդ և 114-րդ հոդվածներում նշված դրույթների կամ Վարչական խորհրդի կողմից հաստատված կանոնների կամ թողարկված ուղեցույցների համաձայն՝ ըստ 36 (1) հոդվածի:
 - բ) Ամեն տարի նա կառավարման վերաբերյալ զեկույց է ներկայացնում Հանձնաժողով և Վարչական խորհուրդ.
 - գ) Նա անձնակազմի նկատմամբ իրականացնում է 31 (2) հոդվածում սահմանված լիազորությունները.
 - դ) Նա ներկայացնում է առաջարկներ, ինչպես նշված է 36 (1) (գ) և 47 (2) հոդվածներում:
 - ե) Նա կազմում է Գրասենյակի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ 109 (1) հոդվածի համաձայն, և կատարում բյուջեն՝ 110-րդ հոդվածի համաձայն:
 - զ) Նա տրամադրում է տեղեկատվություն Վարչական խորհրդի պահանջով՝ 36 (2) հոդվածի առաջին պարբերության համաձայն:
 - է) Նա Վարչական խորհուրդ կարող է ներկայացնել փոփոխությունների նախագիծ՝ սույն Կանոնակարգի, 113-րդ և 114-րդ հոդվածներում նշված դրույթների կամ ցանկացած այլ կանոնների վերաբերյալ, որոնք առնչվում են բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքներին:

ը) Նա կարող է իր լիազորությունները փոխանցել Գրասենյակի անձնակազմի այլ անդամների՝ 113-րդ եւ 114-րդ հոդվածներում նշված դրույթների համաձայն:

3. Նախագահին աջակցում են մեկ կամ ավելի փոխնախագահներ: Եթե նախագահը բացակայում է կամ վատառողջ է, նրան փոխարինում է փոխնախագահը կամ փոխնախագահներից որեւէ մեկը՝ համաձայն Վարչական խորհրդի կողմից հաստատված կանոններում նշված ընթացակարգի կամ թողարկված ուղեցույցների՝ ըստ 36 (1) հոդվածի:

Հոդված 43

Բարձրաստիճան պաշտոնյաների նշանակումը

1. Գրասենյակի նախագահին նշանակում է Խորհուրդը՝ Հանձնաժողովի կողմից առաջարկված թեկնածուների ցուցակից՝ Վարչական խորհրդի եզրակացությունն ստանալուց հետո: Նախագահին զբաղեցրած պաշտոնից ազատելու լիազորությունը վերապահվում է Խորհրդին, որը որոշում է կայացնում Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա՝ Վարչական խորհրդի եզրակացությունն ստանալուց հետո:

2. Նախագահի պաշտոնավարման ժամկետը չի գերազանցում հինգ տարին: Նշված պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել:

3. Գրասենյակի փոխնախագահը կամ փոխնախագահները նշանակվում կամ ազատվում են զբաղեցրած պաշտոնից 1-ին եւ 2-րդ պարբերություններով սահմանված կարգով՝ նախագահի հետ խորհրդակցելուց հետո:

4. Խորհուրդը կարգապահական իրավասություն է իրականացնում 1-ին եւ 3-րդ պարբերություններում նշված պաշտոնյաների նկատմամբ:

Հոդված 44

Օրինականության նկատմամբ հսկողությունը

1. Հանձնաժողովը վերահսկում է Գրասենյակի նախագահի այն գործողությունների օրինականությունը, որոնց նկատմամբ Համայնքի իրավունքով չի նախատեսվում

հսկողություն մեկ այլ մարմնի կողմից, ինչպես նաև Վարչական խորհրդի այն գործողությունների օրինականությունը, որոնք վերաբերում են Գրասենյակի բյուջեին:

2. Հանձնաժողովը պահանջում է 1-ին պարբերությունում նշված ցանկացած անօրինական գործողության փոփոխում կամ անվավեր ճանաչում:

3. Անդամ պետությունները, Վարչական խորհրդի ցանկացած անդամ կամ անմիջականորեն եւ անհատապես ներգրավված ցանկացած անձ կարող են դիմել Հանձնաժողովին՝ 1-ին պարբերությունում նշված ակնհայտ կամ ենթադրյալ գործողությունների օրինականությունը քննելու նպատակով: Հանձնաժողովին պետք է դիմել երկու ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ շահագրգիռ կողմը տեղեկանում է տվյալ գործողության մասին: Հանձնաժողովը որոշում է կայացնում եւ տեղեկացնում դրա մասին երկու ամսվա ընթացքում:

ԳԼՈՒԽ IV. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Հոդված 45

Ստեղծումը եւ լիազորությունները

1. Գրասենյակի շրջանակներում ստեղծվում են մեկ կամ ավելի Բողոքարկման խորհուրդներ:

2. Բողոքարկման խորհուրդը կամ խորհուրդները պատասխանատու են 67-րդ հոդվածում նշված որոշումներից բխող բողոքներին վերաբերող որոշումների կայացման համար:

3. Բողոքարկման խորհրդի կամ խորհուրդների նիստերը հրավիրվում են՝ ըստ անհրաժեշտության: Բողոքարկման խորհուրդների թիվը եւ աշխատանքի բաշխումը որոշվում են կիրարկող կանոններում՝ 114-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 46

Բողոքարկման խորհուրդների կազմը

1. Բողոքարկման խորհուրդը կազմված է նախագահից եւ երկու այլ անդամներից:
2. Յուրաքանչյուր դեպքի համար նախագահին ընտրում է այլ անդամների եւ նրանց համապատասխան փոխարինողներին՝ 47 (2) հոդվածի համաձայն սահմանված որակավորված անդամների ցուցակից:
3. Բողոքարկման խորհուրդը տվյալ դեպքի համար կարող է կանչել եւս երկու անդամների՝ վերը նշված ցուցակից, եթե նա համարում է, որ բողոքի բնույթն այդպես է պահանջում:
4. Բողոքարկման յուրաքանչյուր խորհրդի անդամների համար պահանջվող որակավորումները, որոշումների կայացման նախապատրաստական փուլում առանձին անդամների լիազորությունները եւ քվեարկության պայմանները որոշվում են կիրարկող կանոններում՝ համաձայն 114-րդ հոդվածի:

Հոդված 47

Բողոքարկման խորհուրդների անդամների անկախությունը

1. Բողոքարկման խորհուրդների նախագահները եւ նրանց համապատասխան փոխարինողները նշանակվում են Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր նախագահի եւ յուրաքանչյուր փոխարինողի թեկնածուների ցանկից, որն առաջարկում է Հանձնաժողովը՝ Վարչական խորհրդի եզրակացությունն ստանալուց հետո: Պաշտոնավարման ժամկետը հինգ տարի է: Այդ ժամկետը կարող է երկարաձգվել:
2. Բողոքարկման խորհուրդների այլ անդամները կարող են լինել 46 (2) հոդվածի համաձայն Վարչական խորհրդի կողմից ընտրված անձինք՝ Գրասենյակից ստացված առաջարկի հիման վրա ստեղծված որակավորված անդամների ցանկից՝ հինգ տարի ժամկետով: Ցանկը կազմվում է հինգ տարի ժամկետով: Ժամկետը կարող է երկարաձգվել՝ ցանկի անդամներից բոլորի կամ մի մասի համար:
3. Բողոքարկման խորհրդի անդամներն անկախ են: Որոշումներ կայացնելիս նրանք չեն պարտավորվում որեւէ ցուցումով:

4. Բողոքարկման խորհուրդների անդամները կարող են չլինել 35-րդ հոդվածում նշված կոմիտեների անդամները, եւ նրանք կարող են Գրասենյակում չկատարել այլ պարտավորություններ: Բողոքարկման խորհուրդների անդամների աշխատանքը կարող է լինել կես դրույքով:

5. Բողոքարկման խորհուրդների անդամները պաշտոնավարության ժամկետի ընթացքում չեն կարող պաշտոնանկ արվել եւ, համապատասխանաբար, հանվել ցուցակից, բացառությամբ եթե դրա համար առկա են լուրջ հիմքեր, եւ Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանը դրա մասին որոշում է կայացնում՝ Հանձնաժողովից ստացված հայտի հիման վրա Վարչական խորհրդի եզրակացությունն ստանալուց հետո:

Հոդված 48

Բացառումը եւ բացարկը

1. Բողոքարկման խորհուրդների անդամները կարող են չմասնակցել բողոքարկման որեւէ վարույթի, եթե նրանք այնտեղ ունեն անձնական շահ կամ եթե նրանք նախկինում ներգրավված են եղել վարույթի կողմերից որեւէ մեկում՝ որպես ներկայացուցիչներ, կամ եթե նրանք մասնակցել են բողոքի վերաբերյալ կայացվող որոշմանը:

2. Եթե 1-ին պարբերության մեջ նշված հիմքերից մեկով կամ ցանկացած այլ հիմքով Բողոքարկման խորհրդի անդամը համարում է, որ չպետք է մասնակցի որեւէ վարույթի, նա դրա մասին համապատասխանաբար տեղեկացնում է Բողոքարկման խորհրդին:

3. Բողոքարկման վարույթի ցանկացած կողմ կարող է բացարկ հայտնել Բողոքարկման խորհուրդների անդամներին 1-ին պարբերության մեջ նշված հիմքերից որեւէ մեկով կամ նրանց անաչառությանը կասկածելու դեպքում: Բացարկն անընդունելի է, եթե բողոքարկման վարույթի կողմը, տեղյակ լինելով բացարկ հայտնելու հիմքի մասին, ընթացակարգային քայլ է կատարել: Անդամների քաղաքացիությունը չի կարող բացարկ հայտնելու հիմք լինել:

4. Բողոքարկման խորհուրդները 2-րդ եւ 3-րդ պարբերություններով սահմանված դեպքերում ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ որոշումները

կայացնում են առանց համապատասխան անդամի մասնակցության: Սույն որոշումը կայացնելու նպատակով այն անդամին, որը հրաժարվում է վարույթին մասնակցելուց կամ որին բացարկ է հայտնվել, Բողոքարկման խորհրդում փոխարինում է նրա փոխարինողը:

ՄԱՍ ՉՈՐՍ. ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ I. ՀԱՅՏԵՐ

Հոդված 49

Հայտեր ներկայացնելը

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտը ներկայացվում է հայտատուի ընտրությամբ.

ա) անմիջապես Գրասենյակում կամ

բ) ստեղծված կամ լիազորված ստորաբաժանումներից կամ ազգային գործակալություններից մեկում՝ 30 (4) հոդվածի համաձայն՝ պայմանավորված հայտը ներկայացնելու մասին հայտատուի կողմից Գրասենյակին տեղեկատվություն փոխանցելու գործընթացով՝ ներկայացնելու անմիջապես հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Այն ձեռի մանրամասները, որի համաձայն վերոհիշյալ (բ) կետում նշված տեղեկատվությունը պետք է փոխանցվի, կարող են սահմանվել կիրարկող կանոններում՝ ըստ 114-րդ հոդվածի: Հայտի մասին տեղեկատվություն չփոխանցելը Գրասենյակին՝ վերոհիշյալ (բ) կետի համաձայն, չի ազդում հայտի վավերականության վրա, եթե հայտը Գրասենյակ է հասել ստորաբաժանում կամ ազգային գործակալություն ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

2. Եթե հայտը ներկայացվում է 1 (բ) պարբերության մեջ նշված ազգային գործակալություններից որեւէ մեկին, ապա նա ձեռնարկում է բոլոր քայլերը՝ հայտը ներկայացնելուց հետո երկու շաբաթվա ընթացքում այն Գրասենյակին փոխանցելու համար: Ազգային գործակալությունները կարող են հայտատուից

գանձել վճար, որը չի գերազանցում հայտն ստանալու եւ Գրասենյակ փոխանցելու վարչական ծախսերը:

Հոդված 50

Հայտերը ղեկավարող պայմանները

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի հայտը պետք է բաղկացած լինի առնվազն հետեւյալից.

ա) բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման պահանջ,

բ) բուսաբանական կարգի սահմանում,

գ) հայտատուի կամ անհրաժեշտության դեպքում՝ համատեղ հայտատուների տվյալները սահմանող տեղեկատվություն,

դ) սելեկցիոների անունը եւ հավաստում այն մասին, որ հայտատուների իմացության համաձայն՝ սորտի բուծման կամ հայտնաբերման եւ կատարելագործման մեջ այլ անձինք ներգրավված չեն եղել. եթե հայտատուն չէ բուսաբույծը կամ միակ սելեկցիոները, ապա նա տրամադրում է փաստաթղթերով հիմնավորված ապացույց այն մասին, թե ինչպես է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի նկատմամբ իրավունակությունն անցել իր տիրապետմանը:

ե) սորտի համար ժամանակավոր անվանման սահմանում,

զ) սորտի տեխնիկական բնութագիր,

է) սորտի աշխարհագրական ծագում,

ը) ընթացակարգով սահմանված ներկայացուցչի հավատարմագրեր,

թ) սորտին առնչվող՝ նախկինում իրականացված առետրայնացման որեւէ գործընթացի մանրամասներ,

ժ) սորտի համար ներկայացված որեւէ այլ հայտի մանրամասներ:

2. 1-ին պարբերության մեջ նշված պայմանների մանրամասները, այդ թվում՝ լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը, կարող են նշվել կիրարկող կանոններում՝ 114-րդ հոդվածի համաձայն:

3. Հայտում առաջարկվում է սորտի անվանում, որը կարող է կցվել հայտին:

Հոդված 51

Հայտի ամսաթիվ

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտի ամսաթիվն այն ամսաթիվն է, որով Գրասենյակի կողմից ստացվել է վավերական հայտ՝ համաձայն 49 (1) (ա) հոդվածի կամ ստորաբաժանման կամ ազգային գործակալության կողմից՝ 49 (1) (բ) հոդվածի համաձայն, պայմանով, որ այն համապատասխանում է 50 (1) հոդվածին եւ, դրանով պայմանավորված, պետք է տրվեն վճարներ՝ ըստ 83-րդ հոդվածի՝ Գրասենյակի կողմից սահմանված ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 52

Նախապատվության իրավունքը

1. Հայտի նախապատվության իրավունքը որոշվում է հայտի ստացման ամսաթվով: Եթե հայտերն ունենում են միեւնույն ամսաթիվը, ապա դրանց նախապատվությունը որոշվում է այն հերթականության համաձայն, որով դրանք ստացվել են, եթե դա հնարավոր է որոշել: Հակառակ դեպքում դրանք ունենում են միեւնույն նախապատվությունը:

2. Եթե հայտատուն կամ նրա նախորդն արդեն դիմել են անդամ պետությունում կամ Բույսերի նոր սորտերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի անդամ պետությունում բույսի սորտի նկատմամբ սեփականության իրավունքի համար, եւ հայտի ամսաթիվն ավելի վաղ ներկայացված հայտի տրամադրումից սկսած 12 ամսվա ընթացքում է, ապա հայտատուն օգտվում է ավելի վաղ ներկայացված հայտի նկատմամբ նախապատվության իրավունքից՝ բույսի սորտի

նկատմամբ Համայնքային իրավունքի հայտի առնչությամբ՝ պայմանով, որ ավելի վաղ ներկայացված հայտը դեռ գոյություն ունի հայտի ամսաթվով:

3. Նախապատվության իրավունքն ունենում է այնպիսի ազդեցություն, որ այն ամսաթիվը, որով տրամադրվել է ավելի վաղ ներկայացված հայտը, հաշվվում է որպես բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի հայտի ամսաթիվ՝ 7-րդ, 10-րդ եւ 11-րդ հոդվածների նպատակներով:

4. 2-րդ եւ 3-րդ պարբերությունները եւս կիրառվում են ավելի վաղ ներկայացված հայտերի նկատմամբ, որոնք տրամադրվել են մեկ այլ անդամ պետության մեջ՝ պայմանով, որ 12 (1) (բ) հոդվածի երկրորդ նախադասության մեջ շարադրված պայմանները բավարարվում են այդ պետության մասով՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի հայտի ամսաթվով:

5. Նախապատվության իրավունքի համար ցանկացած հայց, որ ներկայացվել է 2-րդ պարբերության մեջ նախատեսվածից առաջ, դադարում է, եթե հայտատուն հայտի ամսաթվից սկսած երեք ամսվա ընթացքում Գրասենյակին չի տրամադրում ավելի վաղ ներկայացված այն հայտի պատճենները, որոնք վավերացվել են նման հայտերի համար պատասխանատու մարմինների կողմից: Եթե ավելի վաղ ներկայացված հայտը գրված չէ Եվրոպական համայնքների պաշտոնական լեզուներից որեւէ մեկով, ապա Գրասենյակը կարող է նաեւ պահանջել ավելի վաղ ներկայացված հայտի թարգմանությունն այդ լեզուներից որեւէ մեկով:

ԳԼՈՒԽ II. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 53

Հայտի պաշտոնական փորձաքննությունը

1. Գրասենյակը ստուգում է, թե արդյոք՝

ա) հայտը ներկայացվել է պատշաճ ձեւով՝ 49-րդ հոդվածի համաձայն,

բ) հայտը համապատասխանում է 50-րդ հոդվածում նշված պայմաններին եւ այդ հոդվածի համաձայն կիրարկող կանոններում նշված պայմաններին,

զ) անհրաժեշտության դեպքում, նախապատվության հայցը համապատասխանում է 52 (2), (4) եւ (5) հոդվածում նշված դրույթին, եւ

դ) 83-րդ հոդվածի համաձայն նշված վճարները տրվել են՝ Գրասենյակի կողմից սահմանված ժամկետի ընթացքում:

2. Եթե հայտը, չնայած 51-րդ հոդվածում նշված պայմաններին համապատասխանելուն, չի համապատասխանում 50-րդ հոդվածում նշված պայմաններին, ապա Գրասենյակը հայտատուին ընձեռում է հնարավորություն՝ շտկելու ցանկացած թերություն, որը կարող է հայտնաբերվել:

3. Եթե հայտը չի համապատասխանում 51-րդ հոդվածում նշված պայմաններին, ապա Գրասենյակը հայտատուին տեղեկացնում է դրա մասին կամ եթե դա հնարավոր չէ, հրապարակում է այդ տեղեկատվությունը՝ 89-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 54

Ըստ էության փորձաքննություն

1. Գրասենյակը քննում է՝ արդյո՞ք սորտը կարող է լինել բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի առարկա՝ ըստ 5-րդ հոդվածի, արդյո՞ք սորտը նոր է՝ 10-րդ հոդվածի համաձայն, արդյո՞ք հայտատուն իրավասու է հայտ ներկայացնելու՝ ըստ 12-րդ հոդվածի եւ արդյո՞ք կա համապատասխանություն 82-րդ հոդվածում նշված պայմաններին: Գրասենյակը նաեւ քննում է՝ արդյո՞ք սորտի համար առաջարկվող անվանումը հարմար է՝ ըստ 63-րդ հոդվածի: Այդ նպատակներով նա կարող է օգտվել այլ մարմինների ծառայություններից:

2. Առաջին հայտատուն համարվում է իրավասու՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար՝ 11-րդ հոդվածի համաձայն: Այս սկզբունքը չի կիրառվում, եթե մինչեւ հայտի վերաբերյալ որոշում կայացնելը, Գրասենյակը տեղյակ է կամ իրավասություն ստանալու համար ներկայացված հայցի նկատմամբ կայացրած վերջնական վճռի մեջ երեւում է, որ նշված իրավասությունն ընդհանրապես կամ բացառապես վերապահված չէ առաջին հայտատուին՝ 98 (4) հոդվածի համաձայն: Եթե միակ կամ այլ իրավասու անձանց ինքնությունը որոշվել

է, ապա անձը կամ անձինք կարող են վարույթին մասնակցել՝ որպես հայտատու կամ հայտատուներ:

Հոդված 55

Տեխնիկական փորձաքննություն

1. Եթե Գրասենյակը, 53-րդ եւ 54-րդ հոդվածների համաձայն իրականացված փորձաքննությունների հիման վրա բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման համար չի հայտնաբերում որեւէ խոչընդոտ, ապա այն կազմակերպում է տեխնիկական փորձաքննություն՝ 7-րդ, 8-րդ եւ 9-րդ հոդվածներում նշված պայմաններին համապատասխանելու նպատակով, որն իրականացվում է անդամ պետություններից առնվազն մեկում իրավասու գրասենյակի կամ գրասենյակների կողմից, որոնց Վարչական խորհրդի կողմից վերապահված է տվյալ բույսի տեսակների սորտերի տեխնիկական փորձաքննությունների իրականացման պատասխանատվություն, այսուհետ՝ «Փորձաքննությունների իրականացման գրասենյակ կամ գրասենյակներ»:

2. Եթե չկա «Փորձաքննությունների իրականացման գրասենյակ», ապա Գրասենյակը, Վարչական խորհրդի համաձայնությամբ, համապատասխան այլ գործակալությունների է վերապահում փորձաքննությունների իրականացման պատասխանատվությունը կամ այդ նպատակներով ստեղծում է իր սեփական ստորաբաժանումները: Սույն Գլխի դրույթների նպատակով՝ նման գործակալությունները կամ ստորաբաժանումները համարվում են Փորձաքննությունների իրականացման գրասենյակներ: Նրանք կարող են օգտվել հայտատուի կողմից հասանելի դարձրած միջոցներից:

3. Գրասենյակը Փորձաքննությունների իրականացման գրասենյակներին է ուղարկում հայտի պատճենները՝ ինչպես պահանջվում է կիրարկող կանոններով՝ 114-րդ հոդվածի համաձայն:

4. Ընդհանուր կանոնների կամ առանձին դեպքերում պահանջների միջոցով Գրասենյակը որոշում է, թե երբ, որտեղ եւ ինչ քանակով ու որակով պետք է ներկայացվեն տեխնիկական փորձաքննության եւ ստուգիչ նմուշների համար նախատեսված նյութերը:

5. Եթե հայտատուն ներկայացնում է նախապատվության հայց՝ 52 (2) կամ (4) հոդվածի համաձայն, նա տրամադրում է անհրաժեշտ նյութերն ու լրացուցիչ ցանկացած փաստաթուղթ հայտի ամսաթվից սկսած երկու տարվա ընթացքում՝ 51-րդ հոդվածի համաձայն: Եթե ավելի վաղ ներկայացված հայտը հետ է կանչվում կամ մերժվում՝ մինչև երկու տարի ժամկետի ավարտը, ապա Գրասենյակը կարող է պահանջել հայտատուից, որպեսզի վերջինս ներկայացնի նյութեր կամ լրացուցիչ ցանկացած փաստաթուղթ՝ սահմանված ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 56

Տեխնիկական փորձաքննությունների իրականացումը

1. Եթե չի մշակվում տեխնիկական փորձաքննություն իրականացնելու այլ եղանակ՝ 7-ից մինչև 9-րդ հոդվածներում նշված պայմաններին համապատասխանելու նպատակով, Փորձաքննությունների իրականացման գրասենյակները նշված տեխնիկական փորձաքննության նպատակներով աճեցնում են բույսի սորտը կամ նախաձեռնում պահանջվող ցանկացած այլ ուսումնասիրություն:

2. Տեխնիկական ցանկացած փորձաքննություն իրականացվում է Վարչական խորհրդի կողմից թողարկված փորձաստուգման ուղեցույցների եւ Գրասենյակից տրված ցանկացած ցուցումների համաձայն:

3. Տեխնիկական փորձաքննության նպատակներով՝ Փորձաքննությունների իրականացման գրասենյակները, Գրասենյակի համաձայնությամբ, կարող են օգտվել տեխնիկական որակավորում ունեցող այլ մարմինների ծառայություններից եւ հաշվի առնել այդ մարմինների արձանագրած արդյունքները:

4. Փորձաքննությունների իրականացման յուրաքանչյուր գրասենյակ սկսում է տեխնիկական փորձաքննությունը, եթե Գրասենյակն այլ բան չի նախատեսել, ոչ ուշ, քան այն ամսաթվին, որով տեխնիկական փորձաքննությունը պետք է սկսված լիներ՝ ազգային սեփականության իրավունքի համար տրամադրված այն հայտի հիման վրա, որը ներկայացվել է այն ամսաթվով, երբ Գրասենյակի կողմից ուղարկված հայտն ստացվել է Փորձաքննությունների իրականացման գրասենյակի կողմից:

5. 55 (5) հողվածի դեպքում, Փորձաքննությունների իրականացման յուրաքանչյուր գրասենյակ սկսում է տեխնիկական փորձաքննությունը, եթե Գրասենյակն այլ բան չի նախատեսել, ոչ ուշ, քան այն ամսաթվին, որով տեխնիկական փորձաքննությունը պետք է սկսված լիներ՝ ազգային սեփականության իրավունքի համար տրամադրված հայտի հիման վրա՝ պայմանով, որ պահանջվող անհրաժեշտ նյութերն ու լրացուցիչ փաստաթղթերը ներկայացվել են այդ ամսաթվով:

6. Վարչական խորհուրդը կարող է որոշել, որ խաղողի եւ ծառատեսակների սորտերի համար տեխնիկական փորձաքննությունը կարող է սկսել ավելի ուշ:

Հոդված 57

Փորձաքննության վերաբերյալ հաշվետվությունները

1. Փորձաքննությունների իրականացման գրասենյակը կամ Գրասենյակի պահանջով, կամ եթե տեխնիկական փորձաքննության արդյունքները դիտարկի համարժեք՝ սորտի վերաբերյալ գնահատական տալու համար, Գրասենյակ է ուղարկում փորձաքննության վերաբերյալ հաշվետվություն, եւ եթե համարի, որ առկա է համապատասխանություն՝ 7- 9-րդ հոդվածներում նշված պայմաններին, ապա ուղարկում է սորտի բնութագիրը:

2. Գրասենյակը տեխնիկական փորձաքննության արդյունքները եւ սորտի բնութագրի տվյալները փոխանցում է հայտատուին եւ վերջինիս դրանց վերաբերյալ մեկնաբանություններ անելու հնարավորություն է ընձեռում:

3. Եթե Գրասենյակը չի համարում, որ փորձաքննության վերաբերյալ հաշվետվությունն ունի բավարար հիմքեր՝ որոշում կայացնելու համար, ապա սեփական նախաձեռնությամբ, հայտատուի հետ խորհրդակցելուց հետո կամ հայտատուի պահանջով, այն կարող է ապահովել լրացուցիչ փորձաքննություն: Արդյունքների գնահատման նպատակներով իրականացված լրացուցիչ ցանկացած փորձաքննություն մինչեւ կայացված որոշման վերջնական դառնալը՝ 61-րդ եւ 62-րդ հոդվածների համաձայն, համարվում է 56 (1) հոդվածում նշված փորձաքննության մաս:

4. Տեխնիկական փորձաքննության արդյունքները Գրասենյակի կողմից տնօրինելի բացառիկ իրավունքների առարկա են եւ միայն կարող են կիրառվել Փորձաքննությունների իրականացման գրասենյակների կողմից այնքան ժամանակ, որքան դրանք հաստատված կլինեն Գրասենյակի կողմից:

Հոդված 58

Տեխնիկական փորձաքննությունների ծախսերը

Գրասենյակը Փորձաքննությունների իրականացման գրասենյակներին, կիրարկող կանոնների համաձայն, վճար է տրամադրում՝ ըստ 114-րդ հոդվածի:

Հոդված 59

Իրավունքի շնորհման առարկությունները

1. Ցանկացած անձ կարող է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման համար Գրասենյակ ներկայացնել գրավոր առարկություն:

2. Առարկողները բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման վարույթի կողմերն են՝ ի լրումն հայտատուի: Առանց հակասելու 88-րդ հոդվածին՝ առարկողներն ունեն հասանելիություն փաստաթղթերին, այդ թվում՝ տեխնիկական փորձաքննության արդյունքներին եւ սորտի բնութագրի տվյալներին, ինչպես նշված է 57 (2) հոդվածում:

3. Առարկությունները կարող են հիմնավորված լինել միայն այն պատճառաբանությամբ, որ.

ա) 7-ից մինչեւ 11-րդ հոդվածներում նշված պայմանները չեն բավարարվում,

բ) առկա է խոչընդոտ՝ 63 (3) կամ (4) հոդվածով՝ սորտի համար առաջարկվող անվանմանը,

4. Առարկությունները կարող են ներկայացվել.

ա) հայտը ներկայացնելուց հետո ցանկացած ժամանակ կամ 61-րդ կամ 62-րդ հոդվածների համաձայն կայացվող որոշումից առաջ՝ սույն 3 (ա) պարբերության դեպքում,

բ) սորտի համար առաջարկվող անվանման հրապարակումից սկսած երեք ամսվա ընթացքում՝ ըստ 89-րդ հոդվածի՝ սույն 3 (բ) պարբերության համաձայն նշված առարկությունների դեպքում:

5. Առարկությունների վերաբերյալ որոշումները կարող են կայացվել 61-րդ, 62-րդ կամ 63-րդ հոդվածների համաձայն կայացվող որոշումների հետ մեկտեղ:

Հոդված 60

Առարկությունների դեպքում նախապատվությունը՝ նոր հայտին

Եթե 11-րդ հոդվածում նշված պայմաններին չհամապատասխանելու հիմքերով արված առարկությունը հանգեցնում է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտը հետ կանչելուն կամ մերժմանը, եւ եթե առարկողը ներկայացնում է հայտ՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար՝ հետ կանչելուն հաջորդող մեկ ամսվա ընթացքում կամ հայտի ամսաթվից սկսած այն մեկ ամսվա ընթացքում, որի ժամանակ նույն սորտին վերաբերող մերժումը դառնում է վերջնական, նա կարող է պահանջել, որ հետ կանչված կամ մերժված հայտի ամսաթիվը դիտարկվի որպես իր ներկայացրած հայտի ամսաթիվ:

ԳԼՈՒԽ III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հոդված 61

Մերժումը

1. Գրասենյակը մերժում է բույսերի սորտի նկատմամբ համայնքային իրավունք ձեռք բերելու համար ներկայացված հայտերը, եթե եւ այն պահից, երբ այն հաստատում է, որ հայտատուն.

ա) չի վերացրել 53-րդ հոդվածի իմաստով ցանկացած թերություն, որը հայտատուն հնարավորություն ուներ շտկելու իրեն նախապես ծանուցված ժամկետում,

բ) չի պահպանել որեւէ կանոն կամ չի բավարարել որեւէ պահանջ՝ համաձայն 55(4) կամ (5) հոդվածի կամ սահմանված ժամկետում, եթե Գրասենյակը չի համաձայնել, որ նյութը կարելի է չներկայացնել, կամ

գ) չի առաջարկել սորտի համապատասխան անվանում՝ 63-րդ հոդվածի համաձայն:

2. Գրասենյակը նաեւ մերժում է բույսերի սորտերի նկատմամբ համայնքային իրավունք ձեռք բերելու համար ներկայացված հայտերը, եթե.

ա) հաստատում է, որ չեն բավարարվել այն պայմանները, որոնք այն պետք է ստուգի՝ 54-րդ հոդվածի համաձայն, կամ

բ) 57-րդ հոդվածով նախատեսված՝ ուսումնասիրությունների մասին հաշվետվությունների հիման վրա եզրակացնում է, որ 7-րդ, 8-րդ եւ 9-րդ հոդվածներով սահմանված պայմանները չեն բավարարվել:

Հոդված 62

Իրավունք շնորհելը

Եթե Գրասենյակը եզրակացնում է, որ ուսումնասիրության արդյունքները բավարար են՝ հայտի վերաբերյալ որոշում կայացնելու համար եւ առկա չեն խոչընդոտներ՝ 59-րդ եւ 61-րդ հոդվածների համաձայն, ապա այն բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունք է շնորհում: Որոշման մեջ ներառված է սորտի պաշտոնական նկարագիրը:

Հոդված 63

Սորտի անվանումը

1. Եթե բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունք է շնորհվում, ապա Գրասենյակը տվյալ սորտի համար հաստատում է հայտատուի՝ 50(3) հոդվածի համաձայն առաջարկած անվանումը, եթե այն համարում է, որ այս անվանումը համապատասխանում է տվյալ սորտին՝ 54(1) հոդվածի երկրորդ նախադասության համաձայն իրականացված ուսումնասիրության հիման վրա:

2. Սորտի անվանումը համապատասխան է համարվում, եթե առկա չեն խոչընդոտներ՝ համաձայն սույն հոդվածի 3–րդ եւ 4–րդ պարբերությունների:

3. Սորտի անվանումը հաստատելիս առկա են խոչընդոտներ հետեւյալ դեպքերում.

ա) երրորդ կողմի ավելի վաղ ծագած իրավունքը խոչընդոտում է դրա կիրառումը Համայնքի տարածքում,

բ) այն կարող է դժվարություններ առաջացնել օգտագործողների համար՝ ճանաչելու եւ արտաբերելու առումով,

գ) այն նույնական է կամ կարելի է շփոթել այնպիսի անվանման հետ, որով միեւնույն կամ նմանատիպ տեսակի մեկ այլ սորտ գրանցված է բույսերի սորտերի պաշտոնական գրանցամատյանում կամ որի անվանման տակ մեկ այլ սորտի նյութ շուկայահանվել է որեւէ անդամ պետությունում կամ Բույսերի նոր սորտերի պաշտպանության հարցերով միջազգային մարմնի անդամ երկրում՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ մյուս սորտն այլեւս գոյություն չունի, եւ դրա անվանումը կորցրել է իր հատուկ նշանակությունը,

դ) այն նույնական է կամ կարելի է շփոթել այլ անվանումների հետ, որոնք սովորաբար կիրառվում են ապրանքների շուկայահանման համար կամ որոնք, այլ օրենսդրության համաձայն, պետք է բաց մնան,

ե) այն ենթակա է իրավախախտում առաջացնելու անդամ պետություններից մեկում կամ հակասում է պետական քաղաքականությանը,

զ) այն ենթակա է մոլորության մեջ գցելու կամ շփոթություն առաջացնելու՝ կապված սորտի հատկությունների, արժեքի կամ բնույթի հետ կամ կապված սելեկցիոների կամ վարույթի ցանկացած այլ կողմի ինքնության հետ:

4. Առկա է մեկ այլ խոչընդոտ, այն սորտի դեպքում, որը.

ա) անդամ պետություններից մեկում, կամ

բ) Բույսերի նոր սորտերի պաշտպանության հարցերով միջազգային մարմնի անդամ երկրում, կամ

գ) մեկ այլ պետությունում, որի համար Համայնքի ակտով սահմանվել է, որ այդ պետությունում սորտերը գնահատվում են՝ համաձայն ընդհանուր կատալոգների մասին հրահանգներով սահմանված կանոններին համարժեք կանոնների,

գրանցվել է բույսերի սորտերի կամ դրանց նյութերի պաշտոնական գրանցամատյանում եւ շուկայահանվել է նշված երկրներում առետրային նպատակներով, եթե սորտի առաջարկված անվանումը տարբերվում է այդ երկրներում գրանցված եւ կիրառված անվանումից, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս խոչընդոտ է՝ համաձայն 3-րդ պարբերության:

5. Գրասենյակը հրապարակում է այն տեսակները, որոնք համարում է «սերտորեն փոխկապակցված»՝ 3(գ) պարբերության իմաստով:

ԳԼՈՒԽ IV. ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Հոդված 64

Տեխնիկական ստուգում

1. Գրասենյակը ստուգում է՝ արդյոք պաշտպանվող սորտերը շարունակում են գոյություն ունենալ անփոփոխ վիճակում:

2. Այդ նպատակով, իրականացվում է տեխնիկական ստուգում՝ համաձայն 55-րդ եւ 56-րդ հոդվածների:

3. Իրավատերը պետք է ներկայացնի բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Գրասենյակին եւ ուսումնասիրություն իրականացնող այն գրասենյակներին, որոնց վստահվել է սորտի տեխնիկական ստուգումը՝ գնահատելու համար՝ արդյոք սորտը շարունակում է գոյություն ունենալ անփոփոխ վիճակում: Գրասենյակի կողմից տրված հրահանգներին համապատասխան՝ նա պետք է ներկայացնի սորտի նյութը եւ թույլատրի ստուգելու՝ արդյոք իրականացվել են համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար սորտի գոյությունն անփոփոխ վիճակում:

Հոդված 65

Տեխնիկական ստուգման մասին հաշվետվությունները

1. Գրասենյակի պահանջով կամ, եթե վերջինս հաստատում է, որ սորտը միասնական կամ կայուն չէ, ապա ուսումնասիրություններ իրականացնող այն գրասենյակը, որին վստահված է իրականացնելու տեխնիկական ստուգումը, ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն է ուղարկում Գրասենյակ:
2. Եթե, 1-ին պարբերության համաձայն, տեխնիկական ստուգման ընթացքում որեւէ թերություն է հայտնաբերվել, ապա Գրասենյակը տեղեկացնում է իրավատիրոջը տեխնիկական ստուգման արդյունքների մասին եւ հնարավորություն է տալիս վերջինիս՝ մեկնաբանելու այդ արդյունքները:

Հոդված 66

Սորտի անվանման փոփոխությունը

1. Գրասենյակը փոփոխում է սորտի՝ 63-րդ հոդվածի համաձայն սահմանված անվանումը, եթե այն հաստատում է, որ անվանումը չի բավարարում կամ այլեւս չի բավարարում 36-րդ հոդվածով սահմանված պայմանները, ինչպես նաեւ այն դեպքում, երբ առկա է հակասություն երրորդ կողմի՝ ավելի վաղ ծագած իրավունքի հետ, եթե իրավատերը համաձայնում է փոփոխության հետ կամ եթե, ըստ այդմ, իրավատիրոջը կամ ցանկացած այլ անձի, ով պետք է կիրառի սորտի անվանումը, վերջնական վճռով արգելված է կիրառելու սորտի անվանումը:
2. Գրասենյակն իրավատիրոջը հնարավորություն է տալիս առաջարկելու սորտի անվանման փոփոխված տարբերակ եւ գործում է 63-րդ հոդվածին համապատասխան:
3. Սորտի անվանման փոփոխված տարբերակի առաջարկը կարելի է բողոքարկել՝ 59(3)(բ) հոդվածին համապատասխան:

ԳԼՈՒԽ V. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Հոդված 67

Բողոքարկման ենթակա որոշումները

1. Բողոքարկման են ենթակա Գրասենյակի՝ 20-րդ, 21-րդ, 59-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ եւ 66-րդ հոդվածների համաձայն ընդունված որոշումները, ինչպես նաեւ այն որոշումները, որոնք կապված են տուրքերի հետ՝ համաձայն 83-րդ հոդվածի, ծախսերի հետ՝ համաձայն 85-րդ հոդվածի, Գրանցամատյանում տեղեկությունները մուտքագրելուն կամ ջնջելուն՝ համաձայն 87-րդ հոդվածի, եւ հանրության կողմից ուսումնասիրության հետ՝ համաձայն 88-րդ հոդվածի:
2. 1-ին պարբերության համաձայն ներկայացված բողոքարկումն ունի կասեցնող ուժ: Այնուամենայնիվ, Գրասենյակը կարող է որոշում ընդունել չկասեցնելու վիճարկվող որոշումը, եթե այն համարում է, որ դա պայմանավորված է հանգամանքներով:
3. Գրասենյակի որոշումները ենթակա են բողոքարկման՝ համաձայն 29-րդ եւ 100(2) հոդվածների, եթե չի ներկայացվում անմիջական բողոք՝ համաձայն 74-րդ հոդվածի: Բողոքարկումը չունի կասեցնող ուժ:
4. Այն որոշումը, որով վարույթը չի կարճվում կողմերից մեկի առումով, կարող է բողոքարկվել միայն վերջնական որոշման հետ միասին, բացառությամբ այն դեպքի, երբ այդ որոշմամբ առանձին բողոքարկման հնարավորություն է տրվում:

Հոդված 68

Բողոքարկելու եւ բողոքարկման վարույթի կողմ լինելու իրավունք ունեցող անձինք

Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, 82-րդ հոդվածի պահպանմամբ, կարող է բողոքարկել իրեն հասցեագրված, ինչպես նաեւ իրեն չհասցեագրված այն որոշումը, որը թեւեւ որոշման ձեւով հասցեագրված է մեկ այլ

անձի, այնուամենայնիվ, ուղղակիորեն եւ անհատապես առնչվում է իր շահերին: Վարույթների կողմերը կարող են լինել բողոքարկման վարույթների կողմեր, իսկ Գրասենյակը բողոքարկման վարույթների կողմ է:

Հոդված 69

Ժամկետը եւ կարգը

Բողոքարկման մասին ծանուցումը գրավոր է ներկայացվում Գրասենյակին՝ որոշումը հանձնելուց հետո երկու ամսվա ընթացքում, եթե այդ որոշումը հասցեագրված է բողոքարկող անձին կամ, նրա բացակայության դեպքում, որոշումը հրապարակելուց հետո երկու ամսվա ընթացքում, ինչպես նաեւ գրավոր ներկայացվում են բողոքարկման հիմքերը՝ վերոնշյալ կարգով որոշումը հանձնելուց կամ հրապարակելուց հետո:

Հոդված 70

Նախնական վերանայումը

1. Եթե Գրասենյակի այն մարմինը, որը պատրաստել է որոշումը, համարում է, որ բողոքարկումն ընդունելի է եւ լավ հիմնավորված, ապա Գրասենյակը փոփոխում է որոշումը: Սա չի կիրառվում, եթե բողոքարկողին առարկում է բողոքարկման վարույթի մեկ այլ կողմ:

2. Եթե որոշումը չի փոփոխվում բողոքարկման հիմնավորումներն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, ապա Գրասենյակը.

– որոշում է՝ արդյոք այն կձեռնարկի միջոցներ՝ համաձայն 67(2) հոդվածի երկրորդ նախադասության, եւ

– բողոքը փոխանցում է Բողոքարկման խորհրդին:

Հոդված 71

Բողոքների քննությունը

1. Եթե բողոքն ընդունելի է, ապա Բողոքարկման խորհուրդը քննում է դրա հիմնավորվածությունը:
2. Բողոքարկման խորհուրդը, բողոքը քննելիս, անհրաժեշտ հաճախականությամբ հրավիրում է բողոքարկման վարույթի կողմերին՝ սահմանված ժամկետում ներկայացնելու համար իր կողմից տրված ծանուցումների կամ բողոքարկման վարույթի մյուս կողմերի փոխանցած հաղորդագրությունների վերաբերյալ իրենց դիտողությունները: Բողոքարկման վարույթի կողմերն իրավունք ունեն բանավոր հայտարարություններ անելու:

Հոդված 72

Բողոքների վերաբերյալ որոշումները

Բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում բողոքի վերաբերյալ՝ 71-րդ հոդվածի համաձայն իրականացված քննության հիման վրա: Բողոքարկման խորհուրդը կարող է իրականացնել Գրասենյակի իրավասության շրջանակներում գտնվող ցանկացած լիազորություն կամ կարող է փոխանցել գործը Գրասենյակի իրավասու մարմնին հետագա գործողությունների համար: Վերջինս սահմանափակված է Բողոքարկման խորհրդի որոշումների պատճառաբանական մասով այնքանով, որքանով փաստերը նույնն են:

Հոդված 73

Հետագա բողոքարկումը

1. Բողոքարկման խորհրդի որոշումները ենթակա են հետագա բողոքարկման Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանում:
2. Հետագա բողոքը կարող է ներկայացվել իրավասության բացակայության, էական ընթացակարգային պահանջների խախտման, Պայմանագրի, սույն

Կանոնակարգի կամ դրանց կիրառման հետ կապված իրավական ցանկացած նորմի խախտման կամ լիազորությունների չարաշահման հիմքերով:

3. Բողոքարկման վարույթի ցանկացած կողմ, որի շահերից չի բխում որոշումը, ինչպես նաև Հանձնաժողովը կամ Գրասենյակը կարող են ներկայացնել հետագա բողոք:

4. Հետագա բողոքը ներկայացվում է Արդարադատության դատարան Բողոքարկման խորհրդի որոշումը հանձնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

5. Եթե Արդարադատության դատարանը գործը հանձնում է Բողոքարկման խորհուրդ՝ հետագա գործողությունների համար, ապա Խորհուրդը սահմանափակված է Արդարադատության դատարանի որոշումների պատճառաբանական մասով այնքանով, որքանով փաստերը նույնն են:

Հոդված 74

Անմիջական բողոքները

1. Գրասենյակի որոշումները, համաձայն 29-րդ և 100(2) հոդվածների, Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանում ենթակա են անմիջական բողոքարկման:

2. 73-րդ հոդվածով սահմանված դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով:

ԳԼՈՒԽ VI. ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 75

Որոշումների հիմնավորումների շարադրանքը, դատավարական գործունակությունը

Գրասենյակի որոշումներին կցվում է դրանց հիմնավորումների շարադրանքը: Դրանք հենվում են միայն այն հիմքերի կամ ապացույցների վրա, որոնց

վերաբերյալ վարույթների կողմերը հնարավորություն են ունեցել ներկայացնելու իրենց բանավոր կամ գրավոր դիտողությունները:

Հոդված 76

Փաստերի ուսումնասիրությունը Գրասենյակի կողմից սեփական նախաձեռնությամբ

Վարույթներում Գրասենյակը փաստերը քննում է սեփական նախաձեռնությամբ, այնքանով, որքանով դրանք համապատասխանում են 54-րդ եւ 55-րդ հոդվածներով սահմանված ուսումնասիրությանը: Այն հաշվի չի առնում Գրասենյակի կողմից սահմանված ժամկետից դուրս ներկայացված փաստերը կամ ապացույցները:

Հոդված 77

Բանավոր վարույթը

1. Բանավոր վարույթն իրականացվում է Գրասենյակի նախաձեռնությամբ կամ վարույթի ցանկացած կողմի պահանջով:
2. Չհակասելով 3-րդ պարբերությանը՝ Գրասենյակում իրականացվող բանավոր վարույթները դռնփակ են:
3. Բողոքարկման խորհրդում իրականացվող բանավոր վարույթները, այդ թվում՝ որոշման կայացումը հրապարակային են, այնքանով, որքանով Բողոքարկման խորհուրդը, որտեղ իրականացվում է վարույթը, այլ որոշում չի կայացրել այն դեպքերում, երբ հանրության ներգրավումը կարող է լուրջ եւ անցանկալի անհարմարություններ ստեղծել, մասնավորապես՝ բողոքարկման վարույթի որեւէ կողմի համար:

Հոդված 78

Ցուցմունքներ վերցնելը

1. Գրասենյակում իրականացվող ցանկացած վարույթի ժամանակ ապացույցներ ներկայացնելու կամ ստանալու եղանակներ կարող են լինել.

ա) վարույթի կողմերին լսելը,

բ) տեղեկություններ ստանալու հարցումը,

գ) փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնելը,

դ) վկաներին լսելը,

ե) փորձագետների եզրակացությունները,

զ) ստուգումները,

է) գրավոր ցուցմունքները՝ երդմամբ:

2. Եթե Գրասենյակը որոշում է կայացնում կոլեկտիվ մարմնի միջոցով, ապա այդ մարմինը կարող է ներկայացված ապացույցների ուսումնասիրությունը հանձնարարել իր անդամներից որեւէ մեկին:

3. Եթե Գրասենյակն անհրաժեշտ է համարում, որ վարույթի որեւէ կողմը, վկան կամ փորձագետը բանավոր ցուցմունք տան, ապա.

ա) այն համապատասխան անձին Գրասենյակ ներկայանալու ծանուցագիր է ուղարկում, կամ

բ) պահանջում է, որ համապատասխան անձի բնակության երկրում իրավասու դատական մարմինը կամ այլ մարմին վերցնի 91(2) հոդվածով նախատեսված ցուցմունքները:

4. Վարույթի կողմը, վկան կամ փորձագետը, ով կանչվել է Գրասենյակ, կարող է պահանջել, որ վերջինս թույլատրի իրեն ցուցմունք տալու իր բնակության երկրի իրավասու դատական կամ այլ մարմնի առջեւ: Նման պահանջ ստանալիս, կամ վարույթին չներկայանալու դեպքում, Գրասենյակը, 91(2) հոդվածին համապատասխան, կարող է դիմել իրավասու դատական կամ այլ մարմնի, որպեսզի վերջինս ցուցմունք վերցնի այդ անձից:

5. Եթե վարույթի կողմը, վկան կամ փորձագետը ցուցմունք է տալիս Գրասենյակում, եւ եթե Գրասենյակը համարում է, որ ցուցմունքներն անհրաժեշտ է տալ երդմամբ կամ այլ դեպքում՝ պարտադիր ձեւով, ապա այն դիմում է համապատասխան անձի բնակության երկրի իրավասու դատական կամ այլ մարմնի, որպեսզի վերջինս ցուցմունք վերցնի այդ անձից՝ համաձայն անհրաժեշտ պայմանների:

6. Երբ Գրասենյակը դիմում է իրավասու դատական կամ այլ մարմնի, որպեսզի վերջինս ցուցմունք վերցնի, այն կարող է պահանջել, որ տվյալ դատական կամ իրավասու մարմինը ցուցմունքը վերցնի պարտադիր կերպով եւ թույլատրի Գրասենյակի անդամին ներկա գտնվելու լսմանը եւ այդ դատական կամ այլ մարմնի միջոցով կամ ուղղակիորեն հարցաքննելու վարույթի կողմին, վկային կամ փորձագետին:

Հոդված 79

Հանձնելը

Գրասենյակն իր նախաձեռնությամբ հանձնում է բոլոր այն որոշումները, ծանուցագրերը, ծանուցումները եւ հաղորդագրությունները, որոնց համար ժամկետներ են նախատեսվում, կամ որոնք պետք է հանձնել կամ սույն Կանոնակարգի այլ դրույթների համաձայն, կամ սույն Կանոնակարգի համաձայն ընդունված դրույթներով կամ Գրասենյակի նախագահի հրամանով: Հանձնումը կարող է իրականացվել անդամ պետությունների՝ սորտերի հարցերով գրասենյակների միջոցով:

Հոդված 80

Մինչեւ իրավունքի կորուստը եղած դրության վերականգնումը (Restitutio in integrum)

1. Եթե բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքի հայտատուն, իրավատերը կամ Գրասենյակում իրականացվող վարույթի ցանկացած այլ կողմ, որը, կոնկրետ հանգամանքներում բարեխղճորեն գործելով հանդերձ, ի վիճակի չի եղել պահպանելու Գրասենյակին առնչվող ժամկետը, ապա նրա իրավունքները

վերականգնվում են դիմումի համաձայն, եթե ժամկետը չպահպանելը, սույն Կանոնակարգի դրույթների ուժով, ուղղակիորեն հանգեցրել է որեւէ իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցից օգտվելու հնարավորության կորստի:

2. Հայտերը ներկայացվում են գրավոր՝ անհամապատասխանությունը ծագելուց հետո երկու ամսվա ընթացքում այն ժամանակ, երբ ժամկետը դադարել է գործել: Չիրականացված գործողությունը կատարվում է այդ ժամկետում: Հայտերն ընդունվում են միայն չպահպանված ժամկետի ավարտին հաջորդող տարվա ընթացքում:

3. Հայտին կցվում է այն հիմքերի շարադրանքը եւ այն փաստերը, որոնց վրա այն հիմնվում է:

4. Սույն հոդվածի դրույթների գործողությունը չի տարածվում 2-րդ պարբերությունում, ինչպես նաեւ 52(2), (4) եւ (5) հոդվածում նշված ժամկետների վրա:

5. Ցանկացած անձ, որն անդամ պետությունում, հայտի կամ բույսի սորտի նկատմամբ շնորհված համայնքային իրավունքի առումով՝ 1-ին պարբերության համաձայն իրավունքները կորցնելու եւ այդ իրավունքները վերականգնելու միջեւ ընկած ժամանակահատվածում բարեխղճորեն օգտագործել է կամ արդյունավետ եւ իրական միջոցառումներ է ձեռնարկել՝ օգտագործելու համար այն սորտը, որը բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքի հրապարակված հայտի կամ բույսի սորտի նկատմամբ արդեն շնորհված իրավունքի առարկա է, կարող է առանց վճարում կատարելու շարունակել նման օգտագործումն իր գործունեության ընթացքում կամ դրա կարիքների համար:

Հոդված 81

Ընդհանուր սկզբունքները

1. Սույն Կանոնակարգում կամ սույն Կանոնակարգի համաձայն ընդունված դրույթներում ընթացակարգային դրույթների բացակայության դեպքում, Գրասենյակը կիրառում է անդամ պետություններում դատավարական իրավունքի ընդհանուր ճանաչում ստացած սկզբունքները:

2. 48-րդ հոդվածի գործողությունը տարածվում է Գրասենյակի անձնակազմի վրա համապատասխան փոփոխություններով, այնքանով, որքանով այն ներգրավված է 67-րդ հոդվածում նշված որոշումներն ընդունելու գործընթացում, եւ ուսումնասիրություն իրականացնող գրասենյակների անձնակազմի վրա, այնքանով, որքանով այն մասնակցում է նման որոշումներն ընդունելու համար անհրաժեշտ միջոցների իրականացմանը:

Հոդված 82

Դատավարական ներկայացուցիչը

Այն անձինք, որոնց բնակության վայրը կամ կառավարման վայրը կամ տնտեսական գործունեության վայրը Համայնքի տարածքում չէ, կարող են մասնակցել Գրասենյակում իրականացվող վարույթին որպես կողմ միայն այն դեպքում, եթե նրանք նշանակել են դատավարական ներկայացուցչի, որի բնակության վայրը կամ կառավարման վայրը կամ տնտեսական գործունեության վայրը Համայնքի տարածքում է:

ԳԼՈՒԽ VII. ՏՈՒՐՔԵՐԸ, ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Հոդված 83

Տուրքերը

1. Գրասենյակը գանձում է տուրքեր սույն Կանոնակարգով նախատեսված իր պաշտոնական գործողությունների համար, ինչպես նաեւ բույսերի սորտի նկատմամբ համայնքային իրավունքի տեւողության յուրաքանչյուր տարվա համար՝ համաձայն տուրքերի մասին՝ 113-րդ հոդվածին համապատասխան ընդունված կանոնակարգերի:

2. Եթե 113(2) հոդվածով սահմանված պաշտոնական գործողությունների կամ տուրքերի մասին կանոնակարգերում նշված այլ պաշտոնական գործողությունների առումով վճարման ենթակա տուրքերը, որոնք պետք է իրականացվեն միայն հայտի հիման վրա, վճարված չեն, ապա համարվում է, որ հայտը լրացված չէ, կամ

բողոքը ներկայացված չէ, եթե տուրքերի վճարման համար անհրաժեշտ ակտերը գործողության մեջ չեն դրվել՝ Գրասենյակի կողմից տուրքերը վճարելու նոր պահանջ հանձնելու եւ այդ պահանջում վճարումը չկատարելու հետեւանքները նշելու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում:

3. Եթե բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքի հայտատուի կողմից տրամադրված տեղեկությունները կարող են ստուգվել միայն տվյալ տաքսոնի սորտերի տեխնիկական ուսումնասիրության համար սահմանված շրջանակից դուրս եկող տեխնիկական ուսումնասիրությամբ, ապա տեխնիկական ուսումնասիրության համար գանձվող տուրքերը կարող են բարձրացվել մինչեւ փաստացի կրած ծախսերի չափը՝ տուրքերը վճարելու պարտավորություն ունեցող անձին լսելուց հետո:

4. Բավարարված բողոքի դեպքում բողոքարկման տուրքերը կամ, մասնակիորեն բավարարված բողոքի դեպքում՝ բողոքարկման տուրքերի համապատասխան մասը փոխհատուցվում է: Այնուամենայնիվ, փոխհատուցումը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն մերժվել, եթե բողոքի բավարարումը հիմնված է այնպիսի փաստերի վրա, որոնք հասանելի չէին սկզբնական որոշումն ընդունելու ժամանակ:

Հոդված 84

Ֆինանսական պարտավորությունների դադարումը

1. Գրասենյակի՝ տուրքերը վճարելու պահանջ ներկայացնելու հետ կապված իրավունքները դադարում են տուրքերի վճարման ենթակա օրացուցային տարվա ավարտից հետո չորս տարվա ընթացքում:

2. Գրասենյակի կողմից գանձված տուրքերը կամ գերավճարները վերադարձնելու՝ Գրասենյակի հանդեպ ունեցած իրավունքները դադարում են այն օրացուցային տարվա ավարտից հետո 4 տարվա ընթացքում, որի ընթացքում ծագել է իրավունքը:

3. Տուրք վճարելու համար ներկայացված պահանջով դադարեցվում է 1-ին պարբերությունում նշված ժամկետը, իսկ փոխհատուցման վերաբերյալ հիմնավորված գրավոր հայցով դադարեցվում է 2-րդ պարբերության մեջ նշված

ժամկետը: Ընդհատումից հետո ժամկետն անմիջապես վերսկսվում է եւ ավարտվում է ամենաուշը դրա սկսելու օրացուցային տարվա ավարտից վեց տարի հետո, բացառությամբ, եթե միեւնույն ժամանակ այդ իրավունքը կիրարկելու համար դատական վարույթ է հարուցվել. այդ դեպքում ժամկետն ավարտվում է ոչ շուտ, քան վճռի՝ վերջնական որոշման ուժ ստանալուց մեկ տարի հետո:

Հոդված 85

Ծախսերի բաշխումը

1. Բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքը չեղյալ հայտարարելու կամ դադարեցնելու վարույթում կամ բողոքարկման վարույթում պարտված կողմը կրում է վարույթի մյուս կողմի կատարած ծախսերը, ինչպես նաեւ նրա կողմից կատարած՝ վարույթի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը հոգալու պարտավորությունը, այդ թվում՝ գործակալի, խորհրդատուի կամ փաստաբանի ճանապարհածախսը, օրապահիկը եւ վարձատրությունը՝ յուրաքանչյուր ծախսային դասի համար՝ կիրարկող կանոններով սահմանված պայմանների համաձայն սահմանված սանդղակի շրջանակներում՝ համաձայն 114-րդ հոդվածի:
2. Այնուամենայնիվ, եթե վարույթի յուրաքանչյուր կողմ հարցերի որոշ մասով շահում է, մյուս մասով՝ պարտվում, կամ եթե արդարության սկզբունքն այդպես է պահանջում, Գրասենյակը կամ Բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում ծախսերն այլ կերպ բաշխելու վերաբերյալ:
3. Վարույթի այն կողմը, որը դադարեցնում է վարույթը՝ հետ վերցնելով բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքի հայտը, իրավունքները չեղյալ հայտարարելու կամ դադարեցնելու հայտը կամ բողոքը, կամ գիջելով բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքը, կրում է վարույթի մյուս կողմի ծախսերը՝ 1-ին եւ 2-րդ պարբերություններով սահմանված կարգով:
4. Եթե վարույթի կողմերը Գրասենյակում կամ Բողոքարկման խորհրդում կնքում են նախորդ պարբերություններով նախատեսված ծախսերի բաշխումից տարբերվող՝ ծախսերի բաշխման մասին համաձայնություն, ապա այդ համաձայնությունն ընդունվում է ի գիտություն:

5. Դիմումի համաձայն՝ Գրասենյակը կամ Բողոքարկման խորհուրդը սահմանում է նախորդ պարբերությունների համաձայն վճարվելիք ծախսերի չափը:

Հոդված 86

Ծախսերի չափը սահմանող որոշումների կատարումը

1. Գրասենյակի՝ ծախսերի չափը սահմանող վերջնական որոշումները ենթակա են կատարման:
2. Որոշումների կատարումը կարգավորվում է այն անդամ պետությունում կիրառվող քաղաքացիական դատավարության օրենքներով, որտեղ տեղի է ունենում այդ գործընթացը: Հենվելով միայն այն հավաստման վրա, որ համապատասխան փաստաթուղթը նույնական է՝ դրան կցվում է կատարման պայմանը կամ հաստատումը յուրաքանչյուր անդամ պետության կառավարության կողմից այդ նպատակով նշանակված ազգային մարմնի կողմից:
3. Եթե այս ձեռական պահանջների կատարումն ավարտվել է այն ժամանակ, երբ կողմը վճռի կատարման պահանջ է ներկայացնում, ապա ազգային իրավունքի համաձայն՝ այն իրավունք ունի պահանջելու հետագա հաստատում՝ ներկայացնելով գործը իրավասու մարմին:
4. Կատարումը չի կարող կասեցվել՝ բացառությամբ Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանի որոշման: Այնուամենայնիվ, որոշումը կատարելու համար իրականացվող միջոցների կանոնավորության հսկողությունը վերապահվում է ներպետական դատարաններին:

ԳԼՈՒԽ VIII. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ

Հոդված 87

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. Գրասենյակը վարում է բույսերի սորտերի նկատմամբ Համայնքային իրավունքների համար հայտերի գրանցամատյան, որում, մասնավորապես, նշվում են՝

ա) բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտերը տաքսոնի եւ սորտի նախնական նշանակետի մասին տեղեկագրի հետ միասին, դիմումի ամսաթիվը եւ հայտատուի, բուծողի եւ դատավարական ցանկացած համապատասխան ներկայացուցչի անունն ու հասցեն,

բ) բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտերի առնչությամբ վարույթների դադարեցման ցանկացած դեպք՝ (ա) ենթապարբերությունում նշված տեղեկությունների հետ միասին,

գ) սորտի անվանման հետ կապված առաջարկները,

դ) հայտատուի կամ նրա դատավարական ներկայացուցչի ինքնության փոփոխությունները,

ե) ըստ պահանջի՝ 24-րդ եւ 26-րդ հոդվածներում նշված ցանկացած բռնագանձում:

2. Գրասենյակը վարում է բույսերի սորտերի նկատմամբ Համայնքային իրավունքների գրանցամատյան, որում բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունք շնորհելուց հետո մասնավորապես, նշվում են՝

ա) տեսակների եւ սորտերի անվանումները,

բ) սորտի պաշտոնական նկարագիրը կամ Գրասենյակի տրամադրության տակ գտնվող այն փաստաթղթերին հղումը, որոնք պարունակում են սորտի պաշտոնական նկարագիրը՝ որպես գրանցամատյանի անբաժանելի մաս,

գ) այն սորտերի համար, որոնց դեպքում նյութի արտադրման նպատակով պետք է շարունակաբար օգտագործվի հատուկ բաղադրիչներով նյութ, նման բաղադրիչներին հղում,

դ) իրավատիրոջ, բուծողի եւ դատավարական համապատասխան ներկայացուցչի անունն ու հասցեն,

ե) այն ժամկետի սկիզբը եւ վերջը, որի ընթացքում գործում է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը, ինչպես նաեւ իրավունքի դադարեցման պատճառները,

զ) ըստ պահանջի՝ պայմանագրով նախատեսված բացառիկ շահագործման ցանկացած իրավունք կամ հարկադիր շահագործման իրավունք՝ ներառյալ շահագործման իրավունքն ունեցող անձի անունն ու հասցեն,

է) ըստ պահանջի՝ 24-րդ հոդվածում նշված ցանկացած բռնագանձում,

ը) սորտերի նույնականացումը՝ որպես նախնական սորտ եւ ըստ էության ստացված սորտ՝ ներառյալ սորտի անվանումները եւ համապատասխան կողմերի անվանումները, եթե դա պահանջվում է նախնական սորտի նկատմամբ իրավունք ունեցող անձի եւ նախնական սորտից ըստ էության ստացված սորտը բուծողի կողմից: Համապատասխան կողմերից միայն մեկի պահանջը բավարար կարող է լինել այն դեպքում, երբ տվյալ կողմը, 99-րդ հոդվածի համաձայն, մյուս կողմից ոչ կոնֆլիկտային եղանակով ստացել է հաստատում կամ սույն Կանոնակարգի դրույթների համաձայն, կայացվել է վերջնական որոշում կամ վերջնական դատավճիռ, որը պարունակում է համապատասխան սորտերի նույնականացումը՝ որպես նախնական սորտ եւ, ըստ էության, որպես ստացված սորտ:

3. 114-րդ հոդվածի համաձայն՝ կիրարկման կանոններում կարող են նշվել երկու գրանցամատյաններում ներառվելու ցանկացած այլ մանրամասն տվյալ կամ պայման:

4. Գրասենյակը կարող է, սեփական նախաձեռնությամբ կամ իրավատիրոջ հետ խորհրդակցելուց հետո, հարմարեցնել սորտի պաշտոնական նկարագիրը հատկանիշների թվի եւ տեսակի կամ տվյալ հատկանիշների արտահայտման ձևերի առումով, անհրաժեշտության դեպքում, համապատասխան տաքսոնի սորտերի նկարագիրը վերահսկող ընթացիկ դրույթների համաձայն, համապատասխան տաքսոնի այլ սորտերի նկարագիրների հետ համեմատելի սորտի նկարագրություն տալու նպատակով:

Հոդված 88

Հանրության կողմից ուսումնասիրություն

1. Այն գրանցամատյանները, որոնք նշված են 87-րդ հոդվածում, հանրության կողմից բաց են ուսումնասիրման համար:

2. Օրինական հետաքրքրության ցուցաբերման դեպքում, 114-րդ հոդվածի համաձայն, կիրարկման կանոններում սահմանված պայմաններին համապատասխան, հետեյալ տվյալները բաց են հանրության կողմից ուսումնասիրության համար՝

ա) բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման համար հայտերին առնչվող փաստաթղթերը,

բ) բույսի սորտի նկատմամբ արդեն շնորհված Համայնքային իրավունքներին առնչվող փաստաթղթերը,

գ) սորտերի աճի վերաբերյալ տեղեկությունները՝ դրանց տեխնիկական ուսումնասիրության նպատակով,

դ) սորտերի աճի վերաբերյալ տեղեկությունները՝ դրանց շարունակական գոյությունը հաստատելու նպատակով,

3. Այն սորտերի համար, որոնց դեպքում նյութի արտադրման նպատակով պետք է հատուկ բաղադրիչներով նյութ շարունակաբար օգտագործվի, բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտատուի պահանջով, բաղադրիչների՝ այդ թվում դրանց մշակման մասին ամբողջ տեղեկությունը չպետք է ենթակա լինի ուսումնասիրության: Ուսումնասիրությանը չենթարկելու նման պահանջ չի կարող ներկայացվել այն դեպքում, երբ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման համար հայտի վերաբերյալ որոշումն արդեն կայացվել է:

4. 55 (4), 56-րդ եւ 64 -րդ հոդվածների համաձայն՝ ուսումնասիրությունների առնչությամբ ներկայացված կամ ձեռք բերված նյութերը իրավասու մարմինների կողմից չեն կարող փոխանցվել այլ կողմերի սույն Կանոնակարգի համաձայն՝ բացառությամբ երբ լիազորված անձը տալիս է իր համաձայնությունը կամ նման փոխանցում պահանջվում է սույն Կանոնակարգով կարգավորվող համագործակցության առումով ուսումնասիրության նպատակով կամ իրավական դրույթների ուժով:

Հոդված 89

Պարբերաբար կատարվող հրատարակումները

Գրասենյակն առնվազն երկու ամիսը մեկ հրատարակում է գրանցամատյաններում մուտքագրված եւ դեռ չհրապարակված տեղեկություններ պարունակող հրատարակություն՝ 87 (1) եւ(2) (ա), (դ), (ե), (զ), (է) եւ (ը) հոդվածի համաձայն: Գրասենյակը նաեւ հրապարակում է տարեկան հաշվետվություն, որը պարունակում է այնպիսի տեղեկություններ, որոնք Գրասենյակի կողմից համարվում են պատշաճ, բայց դրանք առնվազն պետք է պարունակեն Համայնքի բույսերի սորտերի նկատմամբ գործող իրավունքների, այդ իրավունքներն ունեցողների ցանկը, ինչպես նաեւ շնորհման եւ սպառման ամսաթիվն ու հաստատված սորտի անվանումները: Այս հրատարակումների մանրամասները պարզաբանվում են Վարչական խորհրդի կողմից:

Հոդված 90

Տեղեկությունների եւ հրատարակումների փոխանակումը

1. Գրասենյակը եւ անդամ պետությունների սորտերի հարցերով իրավասու գրասենյակները, ըստ պահանջի եւ չխախտելով տեխնիկական ուսումնասիրությունների արդյունքների ուղարկման համար սահմանված պայմանները, սեփական օգտագործման նպատակով, անվճար միմյանց են փոխանցում իրենց համապատասխան հրատարակումների մեկ կամ մի քանի պատճեններ եւ կիրառվող կամ շնորհված գույքային իրավունքի առնչությամբ ցանկացած այլ օգտակար տեղեկություն:

2. 88 (3) հոդվածում նշված տվյալները հանվում են այդ տեղեկություններից, բացառությամբ եթե՝

ա) այդ տեղեկությունն անհրաժեշտ է՝ 55-րդ եւ 64-րդ հոդվածի համաձայն ուսումնասիրություններ կատարելու համար, կամ

բ) բույսերի սորտերի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտատուն կամ այդ իրավունքն ունեցող անձը տալիս է իր համաձայնությունը:

Հոդված 91

Վարչական եւ իրավական համագործակցությունը

1. Եթե սույն Կանոնակարգով կամ ներպետական իրավունքով այլ կերպ սահմանված չէ, ապա Գրասենյակը, 55 (1) հոդվածում նշված՝ Ուսումնասիրություն իրականացնող գրասենյակները եւ անդամ պետությունների դատարանները կամ մարմինները, ըստ պահանջի, աջակցություն են ցուցաբերում միմյանց՝ փոխանցելով նյութեր կամ մատչելի դարձնելով սորտի, նմուշների կամ ուսումնասիրության նպատակով դրա աճի մասին տեղեկությունները: Եթե Գրասենյակը եւ Ուսումնասիրության գրասենյակները դատարանների կամ դատախազությունների կողմից ուսումնասիրության նպատակով մատչելի են դարձնում նյութերը, նմուշները կամ դրանց աճի մասին տեղեկությունները, ապա ուսումնասիրությունը ենթակա չէ 88-րդ հոդվածում սահմանված սահմանափակումներին, իսկ Ուսումնասիրության հարցերով զբաղվող գրասենյակների կողմից կատարվող ուսումնասիրության վրա չի տարածվում Գրասենյակի որոշումը՝ տվյալ հոդվածի համաձայն:

2. Գրասենյակից դատական հանձնարարություններ ստանալու դեպքում, անդամ պետությունների դատարանները կամ այլ իրավասու մարմիններ այդ Գրասենյակի անունից եւ իրենց իրավասության սահմաններում կատարում են բոլոր անհրաժեշտ հարցումները եւ ձեռնարկում այլ առնչվող միջոցներ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ. ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 92

Համընդհանուր պաշտպանությունն արգելվում է

1. Յանկացած այն սորտի նկատմամբ, որը բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի տրման առարկա է, չպետք է շնորհվի բույսի սորտի նկատմամբ ազգային իրավունք կամ այդ սորտի առումով որեւէ արտոնագիր:

Առաջին նախադասությանը հակառակ շնորհված ցանկացած իրավունք չի գործում:

2. Եթե բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհումից առաջ իրավատիրոջը, 1-ին պարբերությունում նշված կարգով, շնորհվել է մեկ այլ իրավունք՝ միեւնույն սորտի նկատմամբ, ապա վերջինս չի կարող վկայակոչել սորտի նկատմամբ նմանատիպ պաշտպանությամբ իրեն վերապահված իրավունքները, քանի դեռ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը գործում է:

Հոդված 93

Ներպետական իրավունքի կիրառումը

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների համաձայն ներկայացվող պահանջները ենթակա են անդամ պետությունների իրավունքով նշանակված սահմանափակումների, միայն եթե դա ուղղակիորեն նշված է սույն Կանոնակարգում:

ՄԱՍ ՎԵՑ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՑԵՐԸ, ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 94

Խախտումները

1. Ցանկացած անձի դեմ, որը՝

ա) առանց համապատասխան իրավունք ունենալու կատարում է 13 (2) հոդվածում սահմանված գործողություններից որեւիցե մեկն այն սորտի առումով, որի նկատմամբ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունք է շնորհվել, կամ

բ) անտեսում է 17 (1) հոդվածում նշված սորտի անվանման ճիշտ օգտագործման դրույթը կամ անտեսում է 17 (2) հոդվածում նշված համապատասխան տեղեկությունները, կամ

գ) 18 (3) հոդվածին հակառակ՝ օգտագործում է այն սորտի առետրային անվանումը, որի նկատմամբ շնորհվել է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունք կամ այնպիսի նշանակություն, որը կարելի է շփոթել դրա հետ,

իրավատերը կարող է հայց ներկայացնել՝ նման խախտումը վերացնելու կամ ողջամիտ փոխհատուցում ստանալու նպատակով, կամ երկուսը միասին:

2. Ցանկացած անձ, որը դիտմամբ կամ անփութորեն է գործում, առավել եւս պարտավոր է փոխհատուցել իրավատիրոջը տվյալ գործողությունների կատարման հետեւանքով առաջացած ցանկացած վնասի համար: Փոքր անփութության դեպքում, նման հայցերը կարող են նվազեցվել ըստ նման փոքր անփութության աստիճանի, սակայն, այնուամենայնիվ, ոչ այնքան, որ նրանք ավելի քիչ լինեն, քան խախտում կատարած անձի կողմից դրանից ստացած առավելությունը:

Հոդված 95

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների շնորհմանը նախորդող գործողությունները

Իրավատերը կարող է պահանջել ողջամիտ փոխհատուցում ցանկացած այն անձից, որը բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար դիմումի հրապարակման եւ դրա տրամադրման միջեւ ընկած ժամանակահատվածում այնպիսի գործողություն է կատարել, որ նրան անհրաժեշտ է արգելել կատարել հետագա գործողությունները:

Հոդված 96

Վաղեմությունը

94-րդ եւ 95-րդ հոդվածների համաձայն ներկայացվող հայցերը սահմանափակվում են ժամկետով այն ամսաթվից երեք տարի հետո, երբ բույսի սորտի նկատմամբ շնորհվել է Համայնքային իրավունքը եւ իրավատերը տեղեկացվել է պատասխանատու կողմի գործողության եւ ինքնության մասին, կամ

նման տեղեկության բացակայության դեպքում, նշված գործողության դադարեցման պահից սկսած՝ 30 տարի հետո:

Հոդված 97

Խախտմանը վերաբերող ներպետական իրավունքի լրացուցիչ կիրառումը

1. Եթե, 94 հոդվածի համաձայն, պատասխանատու կողմը խախտման միջոցով օգուտ է ստացել իրավատիրոջ կամ շահագործման իրավունքներ ունեցող անձի հաշվին, ապա 101-րդ կամ 102-րդ հոդվածի համաձայն, իրավասու դատարանները կիրառում են իրենց ներպետական իրավունքը՝ ներառյալ փոխհատուցմանն առնչվող իրենց սեփական միջազգային իրավունքը:
2. 1-ին պարբերությունը կիրառվում է նաեւ այլ հայցերի առումով, որոնք կարող են ծագել 95-րդ հոդվածի համաձայն գործողությունների կատարման կամ դրանց անտեսման դեպքում՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունք տրամադրելու համար դիմումի հրապարակման եւ պահանջի քննարկման միջեւ ընկած ժամանակահատվածում:
3. Մյուս բոլոր դեպքերում բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների ազդեցությունները որոշվում են բացարձակապես սույն Կանոնակարգի համաձայն:

Հոդված 98

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի տրամադրումը հայցելը

1. Եթե բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը տրվել է այնպիսի անձի, որը չունի դրա իրավունքը՝ համաձայն 11-րդ հոդվածի, ապա տվյալ իրավունքն ունեցող անձը, չհակասելով ցանկացած այլ միջոցի, որը նրա համար մատչելի է անդամ պետությունների իրավունքով, կարող է հայցել, որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը փոխանցվի իրեն:
2. Եթե անձը Համայնքային իրավունք ունի միայն բույսի սորտի մի մասի նկատմամբ, ապա այդ անձը կարող է, 1-ին պարբերության համաձայն, համատեղ իրավատեր ճանաչվելու պահանջ ներկայացնել:

3. 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն ներկայացված հայցերը կարող են վկայակոչվել միայն բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի տրամադրման հրապարակումից հետո հինգ տարվա ընթացքում: Այդ դրույթը չի կիրառվում այն դեպքում, երբ իրավատերը՝ իրավունքը վերջինիս տրամադրելիս կամ իր կողմից այն ձեռք բերելու ժամանակ տեղյակ էր, որ նման իրավունքները իրեն վերապահված չեն կամ որ դրանք վերապահված են ոչ միայն իրեն:

4. Իրավունք ունեցող անձը կարող է, 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն, համապատասխան փոփոխություններով գործ հարուցել բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի տրամադրման համար այն դիմումի առումով, որը ներկայացվել է ոչ իրավասու անձի կողմից կամ այն անձի կողմից, ում միայնակ չի վերապահված այդ իրավունքը:

Հոդված 99

Սորտի նույնականացման ստացումը

Նախնական սորտի իրավատերը եւ նախնական սորտից ըստ էության ստացված սորտի բուծողը իրավունք ունեն ստանալու համապատասխան սորտերի նույնականացման ճանաչում՝ որպես նախնական եւ ըստ էության ստացված սորտ:

Հոդված 100

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի իրավատիրոջ փոփոխման հետեւանքները

1. 101-րդ եւ 102-րդ հոդվածների համաձայն կայացված դատավճռի հետեւանքով բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի իրավատիրոջ ամբողջական փոփոխման դեպքում 98 (1) հոդվածի համաձայն իրավունքի ձեռքբերումը հայցելու նպատակով, իրավունք ունեցող անձի՝ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների գրանցամատյանում գրանցվելուն պես, ցանկացած շահագործման կամ այլ իրավունքներ չեղյալ են համարվում:

2. Եթե իրավատերը կամ շահագործման իրավունք ունեցող անձն իրականացրել է 13(2) հոդվածում նշված գործողություններից մեկը կամ դա անելու արդյունավետ եւ

իրական պայմանավորվածություններ է ձեռք բերել՝ նախքան 101-րդ կամ 102-րդ հոդվածի համաձայն վարույթ սկսելը, նա կարող է շարունակել կամ իրականացնել այդ գործողությունը՝ պայմանով, որ նա բացառիկ շահագործման իրավունքի պահանջ է ներկայացնում Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների գրանցամատյանում գրանցված նոր իրավատիրոջը: Նման պահանջները տրամադրվում են կիրարկման կանոններում սահմանված ժամկետներում: Շահագործման իրավունքը կարող է շնորհվել Գրասենյակի կողմից՝ կողմերի միջև համաձայնագրի բացակայության դեպքում: 29(3) եւ (7) հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

3. 2-րդ պարբերությունը չի կիրառվում, եթե իրավատերը կամ շահագործման իրավունք ունեցող անձինք գործողությունները կատարելիս կամ պայմանավորվածություններ ձեռք բերելիս գործել են անբարեխղճորեն:

Հոդված 101

Քաղաքացիական օրենքով ներկայացված հատուկ հայցերին վերաբերող իրավասությունը եւ դրանց քննման ընթացակարգը

1. Լուգանոյի կոնվենցիայի, ինչպես նաեւ սույն Կանոնակարգի այս հոդվածի եւ 102- 106-րդ հոդվածների լրացուցիչ դրույթները կիրառվում են 94-100-րդ հոդվածներում նշված հայցերի առումով գործերին վերաբերող վարույթների նկատմամբ:

2. 1-ին պարբերության մեջ նշված վարույթների տիպի վարույթները բերվում են հետեւյալ դատարաններ՝

ա) այն անդամ պետության կամ Լուգանոյի կոնվենցիայի պայմանավորվող կողմ հանդիսացող այլ դատարան, որտեղ պատասխանողը բնակվում է կամ ունի այդ պետության գրանցում, կամ դրա բացակայության դեպքում, այն վերջինիս տնտեսական գործունեության իրականացման վայրն է, կամ

բ) եթե այս պայմանը չի բավարարվում որեւիցե անդամ պետությունում կամ պայմանավորվող կողմ հանդիսացող պետությունում, ապա այն անդամ պետության դատարան, որտեղ հայցվորը բնակվում է կամ ունի գրանցում, կամ

որա բացակայության դեպքում, որը համարվում է վերջինիս տնտեսական գործունեության իրականացման վայրը, կամ

գ) եթե այս պայմանը նույնպես չի բավարարվում անդամ պետություններից որեւէ մեկում, ապա այն անդամ պետության դատարան, որտեղ գրանցված է Գրասենյակը:

Իրավասու դատարաններն իրավասություն ունեն այն խախտումների նկատմամբ, որոնք ենթադրաբար կատարվել են անդամ պետություններից որեւիցե մեկում:

3. Խախտումների համար հայցերին առնչվող գործերով վարույթները կարող են բերվել նաեւ դատարան՝ ըստ այն վայրի, որտեղ վնասը հասցվել է: Նման դեպքերում, դատարանն իրավասություն ունի միայն այն խախտումների նկատմամբ, որոնք ենթադրաբար կատարվել են այն անդամ պետության տարածքում, որտեղ այն գտնվում է:

4. Իրավական ընթացակարգերն անցկացվում են, եւ իրավասու դատարանները գործում են, 2-րդ կամ 3-րդ պարբերությունների համաձայն, որոշված պետության օրենքների համաձայն:

Հոդված 102

Լրացուցիչ դրույթներ

1. Սույն Կանոնակարգի 98-րդ հոդվածի համաձայն՝ հայց ներկայացնելու իրավունքի համար գործողությունների վրա չեն տարածվում Լուգանոյի կոնվենցիայի 5 (3) եւ (4) հոդվածի դրույթները:

2. Չհակասելով սույն Կանոնակարգի 101-րդ հոդվածին՝ կիրառվում են Լուգանոյի կոնվենցիայի 5 (1), 17 եւ 18-րդ հոդվածները:

3. Սույն Կանոնակարգի 101-րդ եւ 102-րդ հոդվածների կիրառման նպատակով, կողմի բնակության կամ գրանցման վայրը որոշվում է Լուգանոյի կոնվենցիայի 52-րդ եւ 53-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 103

Կիրառելի ընթացակարգի կանոնները

Եթե 101-րդ եւ 102-րդ հոդվածների համաձայն, իրավասությունը տրված է ազգային դատարաններին, կիրառվում են համապատասխան պետության այն ընթացակարգային կանոնները, որոնք վերահսկում են համապատասխան պետական գույքի իրավունքներին առնչվող միեւնույն տիպի գործերը՝ չհակասելով 104-րդ եւ 105-րդ հոդվածներին:

Հոդված 104

Խախտման համար գործ հարուցելու իրավունքը

1. Խախտման համար գործերը կարող են հարուցվել իրավատիրոջ կողմից: Շահագործման իրավունք ունեցող անձինք կարող են նման գործեր հարուցել՝ բացառությամբ երբ դա բացահայտորեն բացառվում է իրավատիրոջ հետ կնքած համաձայնագրով՝ բացառիկ շահագործման իրավունքի առկայության դեպքում, կամ Գրասենյակի կողմից՝ 29-րդ կամ 100 (2) հոդվածների համաձայն:
2. Շահագործման իրավունք ունեցող ցանկացած անձ իրեն հասցված վնասի փոխհատուցում ստանալու նպատակով իրավունք ունի միջամտելու իրավատիրոջ կողմից խախտման վերաբերյալ հարուցված գործին:

Հոդված 105

Ազգային դատարանների կամ այլ մարմինների պարտավորությունը

Ազգային դատարանը կամ այլ մարմին բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքին առնչվող գործը լսելիս բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը համարում է վավեր:

Հոդված 106

Վարույթի կասեցումը

1. Եթե գործը վերաբերում է 98 (4)-րդ հոդվածի համաձայն հարուցված գործին, եւ որոշումը կախված է, 6-րդ հոդվածի համաձայն, սորտի պաշտպանվածությունը ապահովելու հնարավորությունից, ապա այս որոշումը չի կարող կայացվել՝ նախքան Գրասենյակը որոշում կկայացնի բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի համար հայտի վերաբերյալ:
2. Եթե գործը վերաբերում է բույսի սորտի նկատմամբ տրված Համայնքային իրավունքին եւ որի առումով, 20-րդ եւ 21-րդ հոդվածների համաձայն, սկսվել են չեղյալ հայտարարելու կամ դադարեցնելու համար վարույթները, ապա վարույթները կարող են կասեցվել, քանի դեռ որոշումը կախված է բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի վավերականությունից:

Հոդված 107

Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների խախտման համար տուգանքները

Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր պատշաճ միջոցները՝ ապահովելու համար, որ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների խախտման համար սահմանվեն այն նույն դրույթները, որոնք կիրառվում են համապատասխան ազգային իրավունքների խախտման դեպքում:

ՄԱՍ ՅՈՒԹ. ԲՅՈՒՋԵ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿԻՐԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդված 108

Բյուջե

1. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով կազմվում է Գրասենյակի բոլոր եկամուտների եւ ծախսերի նախահաշիվ, որն արտացոլվում է Գրասենյակի

բյուջեում. յուրաքանչյուր ֆինանսական տարի համընկնում է օրացուցային տարվա հետ:

2. Բյուջեում արտացոլված եկամուտները եւ ծախսերը պետք է հավասարակշռված լինեն:

3. Չհակասելով եկամտի այլ տեսակների՝ եկամուտը կազմում է 83-րդ հոդվածով սահմանված բոլոր այն վճարները, որոնք վճարվում են 113-րդ հոդվածում նշված վճարների կարգավորումների համաձայն, եւ Եվրոպական Համայնքների բյուջեից վճարվող սուբսիդիան:

4. Չհակասելով այլ ծախսերի տեսակներին՝ ծախսը ներառում է Գրասենյակի հաստատված ծախսերը եւ Գրասենյակի բնականոն գործունեությունից ծագող ծախսերը՝ այդ թվում Ոսումնասիրության հարցերով զբաղվող գրասենյակներին վճարվող գումարները:

Հոդված 109

Բյուջեի նախահաշվի կազմումը

1. Նախագահն ամեն տարի սահմանում է Գրասենյակի հաջորդ տարվա եկամտի եւ ծախսերի հաշվարկը եւ ոչ ուշ, քան ամեն տարվա մարտի 31-ը, փոխանցում է այն Վարչական խորհրդին, պաշտոնների ցանկի հետ միասին, եւ այն դեպքում, երբ հաշվարկով նախատեսվում է 108 (3) հոդվածում նշված սուբսիդիան, ապա դրա նախաբանում տրվում է բացատրական հաշվետվություն:

2. Եթե հաշվարկով նախատեսվում է 108 (3) հոդվածում նշված սուբսիդիան, ապա Վարչական խորհուրդն անմիջապես փոխանցում է հաշվարկը Հանձնաժողովին պաշտոնների ցանկի ու բացատրական հաշվետվության հետ միասին եւ կարող է դրանց կցել իր եզրակացությունը: Հանձնաժողովը դրանք փոխանցում է Համայնքների բյուջետային հարցերով մարմնին եւ կարող է այլընտրանքային հաշվարկին կից նաեւ եզրակացություն ներկայացնել:

3. Վարչական խորհուրդը հաստատում է բյուջեն, որը ներառում է Գրասենյակի պաշտոնների ցանկը: Եթե հաշվարկը պարունակում է 108 (3) հոդվածում նշված սուբսիդիան, ապա բյուջեն, անհրաժեշտության դեպքում, պետք է հարմարեցվի Եվրոպական Համայնքների ընդհանուր բյուջե կատարվող հատկացումներին:

Հոդված 110

Բյուջեի կատարումը

1. Ղեկավարը կատարում է Գործակալության բյուջեն:

Հոդված 111

Վերահսկում

1. Գրասենյակի բոլոր ծախսերի կատարման եւ վճարման, ինչպես նաեւ ամբողջ եկամտի գոյացման ու հավաքագրման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վարչական խորհրդի կողմից նշանակված ֆինանսական հսկիչը:

2. Ամենաուշը յուրաքանչյուր տարվա մարտի 31-ին նախագահը Հանձնաժողովին, Եվրոպական պառլամենտին, Վարչական խորհրդին եւ Եվրոպական համայնքների Աուդիտորների դատարան է ներկայացնում Գրասենյակի՝ նախորդ ֆինանսական տարվա ընդամենը եկամուտների եւ ծախսերի մասին ֆինանսական հաշվետվություն: Աուդիտորների դատարանն ուսումնասիրում է դրանք Եվրոպական Համայնքների հիմնական բյուջեի նկատմամբ կիրառելի համապատասխան դրույթների համաձայն:

3. Վարչական խորհուրդը հաստատում է Գրասենյակի բյուջեի կատարողականը, որի համար պատասխանատու է Գրասենյակի նախագահը:

Հոդված 112

Ֆինանսական դրույթները

Վարչական խորհուրդը, Աուդիտորների դատարանի հետ խորհրդակցելուց հետո, ընդունում է, մասնավորապես, Գրասենյակի բյուջեի մշակման եւ կատարման համար անհրաժեշտ ընթացակարգը սահմանող ներքին ֆինանսական դրույթներ: Ֆինանսական դրույթները պետք է հնարավորինս համապատասխանեն Եվրոպական Համայնքների հիմնական բյուջեի նկատմամբ կիրառվող ֆինանսական կանոնակարգերի դրույթներին եւ չհամապատասխանեն դրանց

միայն այն դեպքում, երբ դա պահանջվում է Գրասենյակի առանձին գործունեության հատուկ պահանջներով:

Հոդված 113

Տուրքերի մասին կանոնակարգերը

1. Տուրքերի մասին կանոնակարգերով, մասնավորապես, որոշվում են այն դեպքերը, որոնց համար, 83(1) հոդվածի համաձայն, պետք է վճարվեն տուրքեր, ինչպես նաև տուրքերի չափը եւ դրանց վճարման եղանակը:

2. Տուրքերը գանձվում են առնվազն հետեւյալ դեպքերում

ա) բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհման համար հայտերին ընթացք տալու համար. այս տուրքով ծածկվում է հետեւյալը՝

– պաշտոնական ուսումնասիրությունը, (53–րդ հոդված),

– նյութական ուսումնասիրությունը (54–րդ հոդված),

– սորտի անվանման ուսումնասիրությունը (63–րդ հոդված),

– որոշումը (61–րդ, 62–րդ հոդվածներ)

– առնչվող հրապարակումը (89–րդ հոդված),

բ) տեխնիկական ուսումնասիրության կազմակերպումն ու իրականացումը,

գ) բողոքարկմանն ընթացք տալը՝ ներառյալ որոշումը,

դ) բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի տեւողության յուրաքանչյուր տարին:

3. ա) Չհակասելով (բ) եւ (գ) կետերին՝ տուրքերի չափը սահմանվում է այնպիսի մակարդակով, որը Գրասենյակի բյուջեի հավասարակշռությունն ապահովելու համար սկզբունքորեն բավարար եկամուտ կերաշխավորի:

բ) Այնուամենայնիվ, 108 (3) հոդվածում նշված սուբսիդիան կարող է ծածկել Գրասենյակի աշխատանքի նախնական ծախսերը 118 (2)-րդ հոդվածով սահմանված ամսաթվից սկսած չորրորդ տարվա դեկտեմբերի 31–ին ավարտվող անցումային ժամկետի համար: Համաձայն 115–րդ հոդվածում սահմանված

ընթացակարգի՝ այս ժամկետը կարող է անհրաժեշտության դեպքում երկարաձգվել ոչ ավելի, քան մեկ տարով:

գ) Բացի դրանից՝ միայն վերոնշյալ անցումային ժամկետի ընթացքում, 108 (3) հոդվածում նշված սուբսիդիան կարող է նաև ներառել Գրասենյակի այն ծախսերը, որոնք կապված են հայտերին ընթացք տալու, տեխնիկական ուսումնասիրությունները կազմակերպելու եւ իրականացնելու եւ բողոքներին ընթացք տալու գործողություններից տարբեր այլ գործողությունների հետ: Այս գործողությունները պետք է մասնավորեցվեն 114-րդ հոդվածի համաձայն կիրարկման կանոններում սույն Կանոնակարգն ընդունելուց ամենաուշը մեկ տարի հետո:

4. Տուրքերի մասին կանոնակարգերն ընդունվում են 115-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, ձեռնարկվելիք միջոցների նախագիծը Վարչական դատարանի հետ քննարկելուց հետո:

Հոդված 114

Կիրարկող այլ կանոններ

1. Ընդունվում են մանրամասն կիրարկող մանրամասն կանոններ՝ սույն Կանոնակարգի կիրառման նպատակով: Դրանք, մասնավորապես, ներառում են հստակ դրույթներ, որոնք.

սահմանում են հարաբերությունները Գրասենյակի եւ Փորձաքննությունների իրականացման գրասենյակների, գործակալությունների կամ հենց իր ստորաբաժանումների միջեւ, որոնց մասին նշվում են 30 (4) եւ 55 (1) ու (2) հոդվածներում,

վերաբերում են 36 (1) եւ 42 (2) հոդվածներում նշված հարցերին,

վերաբերում են Բողոքարկման խորհուրդների ընթացակարգերին,

2. Չհակասելով 112-րդ եւ 113-րդ հոդվածներին՝ սույն Կանոնակարգում նշվող կիրարկող բոլոր կանոններն ընդունվում են՝ 115-րդ հոդվածում նշված ընթացակարգի համաձայն, ձեռնարկվելիք միջոցառումների նախագիծը վերաբերյալ Վարչական խորհրդի խորհրդակցություն անցկացնելուց հետո:

Հոդված 115

Ընթացակարգ

1. Հանձնաժողովին աջակցում է անդամ պետությունների ներկայացուցիչներից կազմված կոմիտեն, որին նախագահում է Հանձնաժողովի ներկայացուցիչը:

2. Եթե պետք է հետեւել այս հոդվածում նշված ընթացակարգին, ապա Հանձնաժողովի ներկայացուցիչը կոմիտեին է տրամադրում ձեռնարկվելիք միջոցառումների նախագիծը: Կոմիտեն ներկայացնում է նախագծի վերաբերյալ իր եզրակացությունն այն սահմանված ժամկետում, որը կարող է նշել նախագահը՝ ըստ հարցի հրատապության: Եզրակացությունը կայացվում է մեծամասնության կողմից, ինչպես սահմանված է Պայմանագրի 148 (2) հոդվածում այն որոշումների համար, որոնք Խորհուրդը պետք է ընդունի Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա: Անդամ պետությունների ներկայացուցիչների ձայները կոմիտեի շրջանակներում հաշվարկվում են այդ հոդվածով սահմանված կարգով: Նախագահը չի քվեարկում:

3. ա) Հանձնաժողովն ընդունում է նախատեսված միջոցառումները, եթե դրանք համապատասխանում են կոմիտեի եզրակացությանը:

բ) Եթե նախատեսված միջոցառումները չեն համապատասխանում կոմիտեի եզրակացությանը, կամ եթե եզրակացություն չի ներկայացվում, Հանձնաժողովը Խորհրդին անհապաղ առաջարկ է ներկայացնում՝ ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ: Խորհուրդը գործում է ձայների որակյալ մեծամասնությամբ:

Եթե Խորհրդին դիմելու ամսաթվից հետո եռամսյա ժամկետի ավարտին Խորհուրդը որեւէ գործողություն չի կատարել, ապա առաջարկված միջոցառումներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհուրդը մերժել է նշված միջոցառումները ձայների պարզ մեծամասնությամբ:

Հոդված 116

Շեղումներ

1. Անկախ 10 (1) (ա) հոդվածից եւ չհակասելով 10 (2) եւ (3) հոդվածներին՝ սորտը համարվում է նոր նաեւ այն դեպքերում, եթե սորտի բաղկացուցիչները կամ սորտի հավաքված նյութերը չեն վաճառվել կամ տրվել այլոց տնօրինմանը բուսաբույծի կողմից կամ նրա համաձայնությամբ՝ Համայնքի տարածքում սորտի շահագործման նպատակներով՝ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց ավելի վաղ, քան չորս տարի առաջ, իսկ ծառերի կամ խաղողի դեպքում՝ ավելի վաղ, քան վեց տարի առաջ, եթե հայտի ամսաթիվը նշված ամսաթվից սկսած մեկ տարվա ընթացքում է:

2. 1-ին պարբերության դրույթը կիրառվում է այսպիսի սորտերի համար նաեւ այն դեպքերում, երբ բույսի սորտի նկատմամբ ազգային իրավունքը շնորհվել է մեկ կամ ավելի անդամ պետությունում՝ մինչեւ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը:

3. Անկախ 55-րդ եւ 56-րդ հոդվածներից՝ այս սորտերի տեխնիկական ուսումնասիրությունը հնարավորինս իրականացվում է Գրասենյակի կողմից՝ հիմնվելով առկա այն արդյունքների վրա, որոնք բխում են բույսի սորտի նկատմամբ ազգային իրավունքի շնորհման որեւէ վարույթից՝ համաձայնեցնելով այն մարմնի հետ, որտեղ իրականացվել են այս վարույթները:

4. Բույսի սորտի նկատմամբ շնորհված համայնքային իրավունքի դեպքում՝ 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն.

13 (5) (ա) հոդվածը չի կիրառվում ըստ էության ստացված սորտերի առնչությամբ, որոնց գոյությունը եղել է համընդհանուր իմացության առարկա Համայնքում՝ մինչեւ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

14 (3) հոդվածի չորրորդ պարբերույթը չի կիրառվում այն ֆերմերների նկատմամբ, ովքեր շարունակում են օգտագործել ստեղծված սորտը՝ 14 (1) հոդվածում նշված թույլտվության համաձայն, եթե մինչեւ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը նրանք արդեն օգտագործել են սորտը 14 (1) հոդվածում նկարագրված նպատակներով՝ առանց վարձատրություն վճարելու. սույն դրույթը կիրառվում է

մինչեւ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող յոթերորդ տարվա հունիսի 30-ը: Մինչեւ այդ ամսաթիվը՝ Հանձնաժողովը ներկայացնում է հաշվետվություն՝ ստեղծված սորտերի վիճակի վերաբերյալ՝ անդրադառնալով յուրաքանչյուր սորտին առանձին: Այդ ժամանակահատվածը կարող է երկարաձգվել 114-րդ հոդվածի համաձայն ընդունված կիրարկող դրույթներում այնքան ժամանակ, որքան Հանձնաժողովի հաշվետվությունը հիմնավորում է այն:

չհակասելով ազգային պաշտպանությամբ վերապահված իրավունքներին՝ 16-րդ հոդվածի դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով այն գործողությունների համար, որոնք վերաբերում են բուսաբույծի կողմից կամ նրա համաձայնությամբ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից առաջ այլ անձանց տրամադրված նյութին, եւ գործածության մեջ են դրվել մի անձի կողմից, ով մինչեւ տվյալ ամսաթիվն արդեն կատարել է նման գործողություններ կամ իրականացրել է արդյունավետ եւ իրական միջոցառումներ՝ այդպիսի գործողությունների համար:

Եթե նշված ամսաթվից առաջ իրականացված նման գործողությունները ներառել են սորտի հետագա բազմացումը, որը նախատեսված է եղել 16 (ա) հոդվածի նշանակության շրջանակներում, պահանջվում է իրավատիրոջ թույլտվությունը հետագա բազմացման համար երկրորդ տարին լրանալուց հետո, իսկ խաղողի եւ ծառատեսակների դեպքում՝ չորրորդ տարին լրանալուց հետո, որը հաջորդում է սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվին:

Անկախ 19-րդ հոդվածից՝ բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքի տեւողությունը նվազեցվում է ամենաերկար ժամանակահատվածով.

որի ընթացքում սորտի բաղկացուցիչները կամ դրանց հավաքված նյութերը վաճառվել կամ տրվել են այլոց տնօրինմանը՝ բուսաբույծի կողմից կամ նրա համաձայնությամբ Համայնքի տարածքում սորտի շահագործման նպատակներով, ինչպես սահմանված է բույսի սորտի նկատմամբ համայնքային իրավունքի շնորհման ընթացակարգից բխող արդյունքներում՝ 1-ին պարբերության դեպքում,

որի ընթացքում բույսի սորտի նկատմամբ ցանկացած ազգային իրավունք կամ իրավունքներ եղել են գործողության մեջ՝ 2-րդ պարբերության դեպքում,

բայց ոչ ավելի, քան հինգ տարով:

Հոդված 117

Անցումային դրույթներ

Գրասենյակը ձեւավորվում է պատշաճ ժամկետում՝ լիովին ստանձնելու սույն Կանոնակարգով իրեն վերապահված առաջադրանքները՝ 1995 թվականի ապրիլի 27-ից սկսած:

Հոդված 118

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:
2. 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-ից մինչեւ 29-ը եւ 49-ից մինչեւ 106-րդ հոդվածները կիրառվում են՝ 1995 թվականի ապրիլի 27-ից սկսած:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտավորեցնող եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում, 1994 թվականի հուլիսի 27-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Թ. ՎԱՅՔԵԼ